Azg
armenian daily

8 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1997, ՇՈՐԵՔՇԱԲԹԻ #192 (1445)

Բոբ Դոուլը եւ Քըրք Քըրքորյանը առաջիկա շաբաթ ժամանելու են Երեւան

Ոչ պաշտոնական աղբյուրներից «Ազգ»-ին հայտնի դարձավ, որ առաջիկա շաբաթվա երկրորդ կեսին Երեւան են ժամանելու սենատոր Բոբ Դոուլը եւ ազգային մեծ բարեւար Քըրք Քըրքորյանը: Թեեւ առայժմ չհաջողվեց ստուգաբար իմանալ այդ անձնավորությունների այցելության նպատակը, սակայն դժվար չէ ենթադրել, որ նրանք Հայաստանում հիմնականում զբաղվելու են 100 միլիոն դոլարի վարկային հիմնադրամի գործնականացման հարցով:

Ինչպես հայտնի է մեր ընթերցողներին, Քրք Քըրքորյանը վերջերս այդ հիմնադրամը նվիրաբերել էր Հայաստանում անհատական ձեռներեցությունը խթանելու նպատակով եւ հայաստեր սենատորին նշանակել էր այդ հիմնադրամի ղեկավարման խորհրդի տնօրեն:

Հիմնադրամը միջազգային բանկի միջոցով մատչելի տոկոսադրույքներով վարկ կտրամադրի գործարարներին:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԼՂՀ ղեկավարությունը եւ ժողովուրդը կողմ փաթեթային լուծման տարբերակին

Արկադի Ղուկասյան. «Երբեք չեմ հրաժարվի պատասխանատվությունից

ԱՐԻՍ ՂԱԶԻՆՅԱՆ
Ստեփանակերտ-Երեւան

Ի պատասխան Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտնի ասուլիսի ընթացքում ձեւակերպված որոշ դրույթների, ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը երեկ, հոկտեմբերի 7-ին անհրաժեշտ համարեց իր հերթին հանդիպել լրագրողներին: Ոչ ավելորդ անգամ նշելով ՀՀ եւ ԼՂՀ ղեկավարության միջեւ ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ առկա տարաձայնությունների մասին, պրն Ղուկասյանն այնուամենայնիվ չցանկացավ մեկնաբանել ՀՀ նախագահի ասուլիսը, գտնելով, որ դա կոռեկտ չի հնչի: Նա՝ խեւառաջ անհրաժեշտության կարգով պրն Ղուկասյանը եւս մեկ անգամ շեշտեց ղարաբաղյան հիմնախնդրի առանձնահատկությունները, որոնց առկայությունը փաստորեն թույլ չի տալիս տվյալ պարագայում կիրառել հարցի կարգավորման «եվրոպական» տարբերակը: Նա հատուկ շեշտեց, որ ԼՂՀ ղեկավարությունը եւ ժողովուրդը կողմ է



հարցի փաթեթային լուծման տարբերակին, այն է նրանգամից լուծել խնդիրը, սկսելով ԼՂՀ կարգավիճակից: «Ես կարող եմ համաձայնվել այն մտքին, որ հարցի լուծման փուլ առ փուլ եղանակը իրականացման առումով անհամեմատ դյուրին է, քան փաթեթայինը: Սակայն ես վստահ չեմ, որ փուլ առ փուլ լուծման տարբերակը, որի մասին այսօր խոսում են միջնորդները եւ Ադրբեջանը, դանդաղ գործունեության ակնկալ չէ», ասաց պրն Ղուկասյանը: «Ես վստահ չեմ, որ առաջարկված տարբերակը խաղաղության եւ ոչ թե պատերազմի ճանապարհ է: Ես չեմ տեսնում այսօր միջնորդների կողմից առաջարկված որեւէ խաղաղական միջոց հիմնախնդրի լուծման համար»: Պրն Ղուկասյանը անհրաժեշտ համարեց եւս մեկ անգամ հաստատել այն ճշմարտությունը, որ «եթե վատ է Ղարաբաղում, ապա վատ կլինի նաեւ Հայաստանում: Չեմ կարծում, որ առանց Ղարաբաղի Հայաստանը լավ կապրի»: Միեւնույն ժամանակ ԼՂՀ նախագահը բացարձակ ճիշտ համարեց Լեւոն Տեր-Պետրոսյանի այն միտքը, որ «Ղարաբաղի բախտը որոշելու է հենց Ղարաբաղի բնակչությունը»

Տես էջ 2

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Բիշքեկում կքննարկվեն միջկառավարական խնդիրներ

Այսօր Երեւանից Բիշքեկ կմեկնի ՀՀ վարչապետի գլխավորած պատվիրակությունը՝ մասնակցելու ԱՊՀ երկրների կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստին, որը տեղի կունենա վաղը: Վարչապետ Ռոբերտ Քոչարյանից զատ, պատվիրակության կազմում են նաեւ կառավարության աշխատակազմի ղեկավար, օպերատիվ հարցերով նախարար Շահեն Կարամանուկյանը, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, փոխարտգործնախարար Սերգեյ Մանասարյանը, ԱՊՀ կանոնադրական մարմիններում ՀՀ մշտական եւ լիազոր ներկայացուցիչ Սպարտակ Կոստանյանը, ԱՊՀ տնտեսական միության միջպետական տնտեսական կոմիտեում ՀՀ մշտական ներկայացուցիչ Սուրեն Սահակյանը: ԱՊՀ վարչապետների խորհրդի նիստում քննարկման կներկայացվի 17 հարց: Քննարկվող հարցերի շրջանակը կընդգրկի ԱՊՀ երկրներում տնտեսական բարեփոխումների ընթացքը, ընդհանուր ագրարային շուկայի մասին համաձայնագրի նախագծի քննարկումը, ընդհանուր տրանսպորտային տարածության եւ փոխհամագործակցության սկզբունքների մասին, ռազմատեխնիկական համագործակցության եւ ընդհանուր հակաօդային պաշտպանության համակարգերի, ինչպես նաեւ կազմակերպված հանցագործության դեմ պայքարի բյուրո ստեղծելու հարցերը:

Լեւոն Տեր-Պետրոսյանին կշնորհվի Սորբոնի համալսարանի պատվավոր դոկտորի կոչում

ԵՐԵՎԱՆ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 12-15-ը նախատեսվում է ՀՀ նախագահի աշխատանքային այցը Ֆրանսիա:

Նախատեսված հանդիպումներից բացի, այցի ընթացքում սպասվում է նշանակալի իրադարձություն Հայաստանի նախագահի համար. Լեւոն Տեր-Պետրոսյանին կշնորհվի Սորբոնի համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանությունից Արմենպրեսը տեղեկացավ, որ վերոնշյալ հեղինակավոր գիտական հաստատության պատվավոր դոկտորի կոչումը նշանավոր անձանց տրվում է որպես պատվո նշան: Այս բարձր կոչմանն արժանանում են քաղաքագետներ, արվեստագետներ, պետական գործիչներ:

Սորբոնի համալսարանի պատվավոր դոկտորի կոչման արժանացել են Նելսոն Մանդելան, Ալբեր Էյնշտեյնը, Ֆեդերիկ Մակլերը, Անտուան Մեյեն, Շարլի Չապլինը եւ ուրիշներ:

Հայաստանի նախագահը նաեւ Ֆրանսիայի ասիական ընկերության, Վենետիկի Մխիթարյան ակադեմիայի, Լա Վեռնի եւ Ստրասբուրգի համալսարանների պատվավոր դոկտոր է:-

ԼՂՀ ԱԳՆ. Ադրբեջանական հանրությանը ներշնչվում է պատերազմի անխուսափելիության գաղափարը

ԵՐԵՎԱՆ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հոկտեմբերի 7-ին Երեւանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչությունը տարածել է ԼՂՀ ԱԳՆ հուշագրի տեքստը, որ այս տարվա սեպտեմբերի 22-ին հանձնվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին:

Փաստաթղթում նշվում է, որ անցած տարվա ընթացքում պաշտոնական Բաքուն միջազգային հանրությանը հավաստիացնում էր Լեռնային Ղարաբաղին անվտանգության երաշխիքների ապահովման իր պատրաստակամությունը: Միեւնույն ժամանակ, պաշտոնյաների արտահայտությունները Ադրբեջանի պետական զանգվածային լրատվամիջոցներում վկայում են հայ ժողովրդի նկատմամբ, մասնավորապես «Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի հայ համայնքի» նկատմամբ ազգային խտրականության եւ անհանդուրժողության նպատակամետ հրահրման մասին:

ԼՂՀ ԱԳՆ-ն ընդգծում է, որ թշնամու «անիծված հարեւանի» կերպարի ստեղծման գործընթացը իրականացվում է նախագահ Ալիեւի աշխատակազմի անմիջական վերահսկողությամբ: Դրա հաստատումն է ինչպես Հ. Ալիեւի մեծավոր շրջապատի բարձրաստիճան մի շարք պաշտոնյաների գործունեությունը, այնպես էլ «Բակինսկի ռաբոչի» թերթի հակահայկական քարոզչությունը, որի հիմնադիրը Ադրբեջանի Հանրապետության նախագահի գործերի վարչությունն է:

Իբրեւ օրինակ ԼՂՀ ԱԳՆ-ն ներկայացնում է հետեւյալ փաստերը.

Տես էջ 8

Անցում ձմեռային ժամանակի

ԵՐԵՎԱՆ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հոկտեմբերի վերջին կիրակի օրը, գիշերը ժամը 3-ին, ժամացույցի սլաքը մեկ ժամ հետ կտարվի: Այս մասին Արմենպրեսի թղթակցին ասաց ՀՀ ստանդարտացման, սերտիֆիկացման եւ չափագիտության վարչության պետ Ղ. Մեհրաբյանը, ավելացնելով, որ դրանով չեղյալ կհայտարարվի ամառային ժամանակը, եւ Հայաստանը կմտնի իր բնական ժամային գոտին:

Հոկտեմբերի 9-ին փոստային անվճար ծառայություններ

ՀՀ կառի նախարարության լրատվական կենտրոնը հայտնում է, որ սույն թվականի հոկտեմբերի 9-ին՝ Փոստի համաշխարհային օրվա կապակցությամբ, ՀՀ միջազգային եւ ներհանրապետական նամակագրական թղթակցությունների «հասարակ եւ պատվիրված նամակների, փոստային բացիկների, փաթեթների» ընդունումը եւ առաքումը հոկտեմբերի 9-ին իրականացվում է անվճար:

Դարձյալ ԱԺ արտահերթ նիստ

Երեկ տեղի ունեցած նիստում կառավարությունը հանդես եկավ Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարելու նախաձեռնությամբ: Որոշվեց առաջարկել ԱԺ նախագահ Բաբկեն Արարքցյանին՝ Սահմանադրության 70-րդ հոդվածով սահմանված կարգով, 1997 թվականի հոկտեմբերի 8-ին, ժամը 18.30-ին հրավիրել Ազգային ժողովի արտահերթ նիստ հետեւյալ օրակարգով. «Հունաստանի Ազգային բանկի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ «Հայաստանի Հանրապետությանը 3 մլն ԱՄՆ դոլարի վարկի տրամադրման մասին» համաձայնագրի վավերացման մասին»:

Բրիտանահայ բարեւար Վաչե Մանուկյանի նոր հատկացումը

Բրիտանահայ բարեւար Վաչե Մանուկյանը վերջերս «Հայաստան» համահայկական հիմնադրամին հատկացրեց 500.000 ԱՄՆ դոլար, որը բարեւարի առաջարկով երկու տարվա ընթացքում կհատկացվի հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ընթացիկ մշակութային ծրագրերին:

Մինչ այդ Վաչե Մանուկյանը հատկացումներ է արել «Գորիս-Ստեփանակերտ» ավտոճանապարհի շինարարության, «Նոյաստներ զոհված եւ առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին» ծրագրի համար:

Իր առատաձեռն հատկացումների համար Վաչե Մանուկյանն արժանացել է հիմնադրամի «Պատվո անդամ» կոչման:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՍԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԱԼԻԵՎԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊԵԼՈՒԾ ՀԵՏՈ

Եվգենի Պրիմակով. «Ռուս-հայկական պայմանագիրը ուղղված չէ Ադրբեջանի դեմ»

ԲԱԿՈՒ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Եվգենի Պրիմակովը «օգտակար եւ հետաքրքիր» է համարել Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի հետ իր հանդիպումը, որն այսօր այստեղ տեղի է ունեցել երկու ժամից ավելի փակ դռների ետեւում: Այս մասին Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը հայտարարել է հանդիպման ավարտից հետո:

Ե. Պրիմակովը չթաքցրեց, որ ռուս-ադրբեջանական հարաբերություններում կան հիմնախնդիրներ, որոնք, նրա խոսքերով, հարկավոր է լուծել բանակցությունների ճանապարհով: Այդ հիմնախնդիրների թվում նա նշեց օգոստոսի 29-ին Մոսկվայում ստորագրված ռուս-հայկական պայմանագիրը: Բորիս Ելցինի հանձնարարությամբ նա վերստին ընդգծեց, որ այդ պայմանագիրը դյուրն-ինչ ուղղված չէ այլ երկրների, այդ թվում նաեւ Ադրբեջանի դեմ: Այդ պայմանագիրը չի գործադրվի հօգուտ այն ուժերի, որոնք հանդես են գալիս Ադրբեջանի տարածային ամբողջականության դեմ, հավաստել է նախարարը:

Ինչպես հայտարարել է Պրիմակովը, Ռուսաստանը Ադրբեջանին կարեւոր գերակա երկիր է համարում իր արտաքին քաղաքականության մեջ: Երկու պետությունների միջեւ հարաբերությունները պետք է զարգանան վերընթաց ուղով, եւ դրա համար չկա որեւէ լուրջ եւ օբյեկտիվ արգելք, ասել է նա:

Անդրադառնալով ղարաբաղյան հիմնախնդրին, Եվգենի Պրիմակովը ողջունել է այն փաստը, որ Ադրբեջանը դրականորեն է վերաբերվել Լեռնային Ղարաբաղի խնդրով ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ռուսաստանցի, ամերիկացի եւ ֆրանսիացի համանախագահների առաջարկին: Նա այժմ ամենից կարեւոր է համարում կարգավորման հեռագա քայլերի մշակումը, ինչը հնարավոր է Մինսկի խմբի համանախագահների առաջարկներին կողմերի գրավոր պատասխանից հետո: Նրա համոզմամբ, հակամարտությունը պետք է կարգավորվի Ադրբեջանի տարածային ամբողջականության պահպանման պայմանով: «Սա ղարաբաղյան խնդրի լուծման հիմքերից մեկն է», հայտարարել է Ռուսաստանի արտգործնախարարության ղեկավարը:

Եվգենի Պրիմակովը համաձայնել է Ադրբեջանի ղեկավարության այն կարծիքին, թե խաղաղարար գործընթացում կա որոշ առաջխաղացում, եւ հույս է հայտնել, որ մինչեւ տարեվերջ կհաջողվի արմատական տեղաշարժերի հասնել այս ուղղությամբ:

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

ԱԺ-ԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Երբ բարեկրթության կանոնները կարգավորվում են օրենքով

Ազգ-ի հոկտեմբերի 7-ի նիստում քվեարկությամբ ընդունվեց Հարկերի մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու օրենքի նախագիծը առաջին ընթերցմամբ: Ընդունվեց նաեւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու օրենքի նախագիծը:

Այնուհետեւ ներկայացվեց Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու օրենքի նախագիծը: Համաձայն առաջարկվող փոփոխությունների, ՀՀ-ի բոլոր մակարդակի ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ուսուցումն ու ընդունելության քննությունները, ինչպես նաեւ այլ առարկաների հայերենով դասավանդումը չապահովելը պատժվում է օրենքով եւ առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի եռապատիկից մինչեւ վեցապատիկ չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հնգապատիկից մինչեւ տասնապատիկի չափով («պաշտոնական անձ» հասկացությունը կպարզաբանվի Պետական ծառայողի մասին օրենքի ընդունմամբ): Նվազագույն աշխատավարձի հնգապատիկից մինչեւ տասնապատիկի չափով տուգանք է առաջացնում նաեւ պետական մարմինների, ձեռնարկությունների, կազմակերպությունների գործավարությունը հայերենով չիրականացնելը: (Ավելորդ չեմ համարում նշել, որ ներկայացված նախագծում հայերենի անխափան գործածությունը միշտ չէ, որ պահպանվում է, մասնավորապես, նախագծում հանիցս կիրառվում է սխալ ձեւ՝ «ոչ հայերենով» արտահայտությունը, կան նաեւ բարդասական բնույթի մի շարք խախտումներ):

Տուգանք է նշանակվում նաեւ այն դեպքերում, եթե ցուցակների, գովազդների, ձեւաթղթերի, դրոշմանիշների, կնիքների ձեւավորման ժամանակ չի պահպանվում հայերենը:

Համագումարներում, նստաշրջաններում, ժողովներում եւ այլ զանգվածային եւ պաշտոնական միջոցառումների ժամանակ պարտադիր է հայերենի կիրառումը, օտարալեզու ելույթների դեպքում պարտադիր նաեւ հայերեն թարգմանության ապահովումը: Սույն հոդվածի խախտումը եւս հղի է տուգանվելու հեռանկարով:

Օրենքի նախագիծն ընդունվեց առաջին ընթերցմամբ:

Երկրորդից երրորդ ընթերցման տեղափոխվեց Ա. Սահակյանի, Խ. Հարությունյանի եւ Ա. Բաղդասարյանի ներկայացրած օրենքի նախագիծը Ազ-ի կանոնակարգում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Փոխարենը երկրորդ ընթերցմամբ ընդունվեց կանոնակարգային փոփոխություններ կատարելու վերաբերյալ Գ. Ղարիբջանյանի եւ Հովհ. Դուրգարյանի հեղինակած օրենքի նախագիծը:

Երկրորդ ընթերցումից դուրս մնաց «Ազգային ժողովի նստավայր գեն-ով մուտք գործելն արգելվում է» հոդվածը: Փոխարենը օրենքի ուժ ստացավ Բ. Արարքյանի հետեւյալ առաջարկը. «Ազգային ժողովի նիստերի ժամանակ դահլիճում արգելվում է բջջային եւ այլ հեռախոսներ դահլիճում տեղադրված հեռախոսի»:

Տխուր մահանգումների տեղիք է տալիս հիշյալ դրույթը, երբ ներքին բարեկրթության պահպանման հարցերը կարգավորվում են օրենքով:

Այսպես շարունակվելու դեպքում, զարմանալի չի թվա, եթե ապագայում օրենքի դրույթները ներառեն դահլիճում տեղադրված աթոռները, միջանցքում տեղադրված բազկաթոռները, ինչպես նաեւ... պատգամավորների ծամոնները:

Մնում է առաջարկել, որ Ազ-ում հավասարակշռությունը պահպանելու համար հավատարմագրված լրագրողներին եւս օժտել բջջային հեռախոսներով, հակառակ դեպքում Ազ-ում մեկ հեռախոսազանգ իրականացնելու համար ստիպված ենք լսել պատգամավորների քաղաքական մեկնաբանություններն այն մասին, որ Հայաստանում «օդոգիցիա չկա, մամուլ չկա», որ կառավարությունն ինչ ուզում է անում է, իսկ Ազ-ն վերածվում է... պոլիտբյուրոյի:

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Թմրաբիզնեսը հովանավորում են վերին էշելոնների մարդիկ

Համոզված են ամերիկյան փորձագետները

Թմրամոլությունն ու կոռուպցիան դասվում են միջազգային հանցագործությունների թվին, սակայն Հայաստանն ի տարբերություն Արեւմուտքի, մասնավորապես Միացյալ Նահանգների, դեռեւս չունի բավարար փորձ՝ պայքարելու նման հանցագործությունների դեմ: Այս առումով ՀՀ դատախազության եւ ամերիկյան իրավաբանների միության աջակցությամբ ԳԱԱ-ում անցկացվում է գիտաժողով՝ նվիրված թմրաբիզնեսի, կոռուպցիայի եւ «փողերի լվացման» դեմ տարվող պայքարի կազմակերպմանն ու դատախազության խնդիրներին:

Թերեւս թմրաբիզնեսը մեզանում նոր հանցատեսակ է եւ հարաբերություններում թվերը սարսափեցնող չեն, բայց, ինչպես նշեց ՀՀ դատախազը, այսօր արդեն առկա է աճի միտում, որը լուրջ մտահոգության խնդիր է:

Նշվեց, որ տնտեսական նոր փոխհարաբերությունների ձեւավորումն ինքնին բերում է նոր հանցատեսակներ, որոնց զգալի մասը մեզանում անծանոթ է, չկան երաշխիքներ, որ Հայաստանը զերծ կմնա այդ հանցատեսակներից: Կարեւորելով ամերիկյան իրավաբանների միության աջակցությունը, փորձի փոխանակումը, ՀՀ դատախազությունը պետք է կիրառի հնարավորինը կանխարգելիչ աշխատանքներ տանելու եւ ժամանակակից մակարդակով հսկողություն իրականացնելու համար:

Ընդգծվեց, որ հանցագործությունների դեմ պայքարը կենսական խնդիր է եւ Հայաստանը չպետք է հեռ մնա միջազգային չափանիշներից, քանի որ կազմակերպված հանցագործների շփումներն ավելի մեծ են, առաջ են կիրառվում հանցագործության մեխանիզմները, իսկ իրավապահ մարմինները պետք է մեկ քայլ առաջ կանգնած լինեն, որպեսզի կանխավ գիտակցեն, թե հատկապես որ ոլորտներում ինչպիսի հանցագործություններ կարող են կատարվել: Ըստ ամերիկյան փորձագետների, Նահանգներում հիմնական շեշտը չի դրվում այն անձանց վրա, ովքեր փոքր քանակությամբ են թմրանյութեր տպառում: Ռազմավարության հիմնական նպատակն է գտնել բարձր էշելոններում կանգնած մարդկանց, ովքեր հանցագործ կազմակերպության հովանավորներն են, ֆինանսական միջոցներ ապահովողը: Ամերիկյան փորձագետները միաժամանակ հավաստեցին, որ Հայաստանում դեռեւս լուրջ խնդիրներ չկան, սակայն Հայաստանը կարող է դառնալ թմրաբիզնեսի խայծերուկ:

Կարեւորելով գիտաժողովի եւ փորձի փոխանակման նշանակությունը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդգծեց, որ Միացյալ Նահանգների փորձի հիման վրա պետք է կիրառել միջոցներ նման երեւույթների դեմ պայքարելու եւ ապագա դատաիրավական բարեփոխումների շրջանակներում, համապատասխան օրենսդրական փոփոխությունների ծանապարհով ստեղծել հստակ օրենսդրական դաշտ եւ ռազմավարություն նման հանցագործությունների դեմ պայքարելու համար:

ԱՐԱՔՍ ՍԱՖԱՐՅԱՆ

Միջազգային կարմիր խաչի ահազանգը

7 ՀՈԿՏԵՄԲԵՐ, VOA, DW: Միջազգային կարմիր խաչը աշխարհի երկրներին խնդրում է ծնռան նախօրեին 16 մլն դոլար հատկացնել նախկին խորհրդային ոռոշ հանրապետությունների բնակչությանը օգնություն ցուցաբերելու համար: Կարմիր խաչի եւ մահիկի ֆեդերացիան նախազգուշացնում է Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելառուսում, Սոլդովայում վրա հասնող հումանիտար աղետի մասին, որը մասնավորապես առաջացել է առողջապահության եւ սոցիալական ապահովության համակարգերի փլուզման հետեւանքով: Կարմիր խաչը հայտարարեց, թե միլիոնավոր մարդիկ, այդ թվում շատ երեխաներ եւ տարեց մարդիկ կարող են զոհվել սովից կամ ցրտից: Այս ծմեռն անսովոր խիստ կլինի վերը նշված ԱՊՀ երկրներում:

Հոկտեմբերի 8-ը տարեւային աղետների վտանգի նվազեցման միջազգային օր

ԵՐԵՎԱՆ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան 1990 թ. հունվարի 1-ից հայտարարել է տարեւային աղետների վտանգի նվազեցման տասնամյակ: Մինչեւ 2000 թվականը, յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 2-ը չորեքշաբթին նշվելու է որպես տարեւային աղետների վտանգի նվազեցման միջազգային օր:

Եվ այսպես, վաղը Կաղանում «Ջրեր. բարձր եւ ցածր մակարդակներ» թեմայով տեղի կունենա խորհրդակցություն ՄԱԿ-ի՝ Հայաստանի գրասենյակի, տարակարգ իրավիճակների վարչության, տարակարգ իրավիճակների կադրերի պատրաստման ինստիտուտի, ինչպես նաեւ այլ գերատեսչական մարմինների մասնակցությամբ: Ջրային աղետների, ՄԱԿ-ի հումանիտար օգնության եւ այլ հարցերի վերաբերյալ կլինեն զեկուցումներ, որոնց նպատակն է բնակչությանը իրազեկ պահել հնարավոր աղետների եւ դրանց կանխարգելման միջոցների մասին:

Հայաստանն ակտիվորեն մասնակցում է ամենամյա այս միջոցառումներին, քարոզչական աշխատանք տանում բնակչության շրջանում:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԼՂՀ ղեկավարությունը եւ ժողովուրդը կողմ փաթեթային լուծման տարբերակին

Սկիզբը էջ 1

Այս պարագայում հատկանշական է ԼՂՀ նախագահի հետեւյալ խոսքը. «Ես չեմ վախենում պատասխանատվությունից եւ կարող եմ հավատիացնել, որ երբեմ չեմ հրաժարվի այդ պատասխանատվությունից, եթե նույնիսկ իրավիճակը լինի շատ լուրջ»: Պրն Ղուկասյանը չբացառեց, որ անհրաժեշտության դեպքում ԼՂՀ-ում կարող է անցկացվել հանրաքվե բնակչության խոսքը տեղ հասցնելու նպատակով: «Իսկ կպաշտպանի՞ Հայաստանը ԼՂՀ-ի դիրքը, թե չի պաշտպանի, իմ կարծիքով այստեղ է. եթե Հայաստանը հայտարարում է, որ ԼՂՀ հարցը պետք է լուծեն դարաբաղցիները, ուրեմն կպաշտպանի: Սակայն, եթե ՀՀ ղեկավարությունը գտնում է, որ ԼՂՀ դիրքը դեստրուկտիվ է, ապա՝ ոչ»: Պրն Ղուկասյանը նշեց, որ անկախ միջնորդների եւ Ադրբեջանի այն կարծիքից, որ «ԼՂՀ դիրքը դեստրուկտիվ է», իրականում ԼՂՀ-ն հանդես է գալիս կոնստրուկտիվ առաջարկություններով: Ըստ իրեն, «բանակցությունները չպետք է դառնան ինքնանպատակ» եւ դիվանագիտական սեղաններին պետք է դրված լինեն լուրջ եւ մտածված ծրագրերի նախագծեր: Պրն Ղուկասյանը շեշտեց, որ մինչ օրս նման փաստաթուղթ դեռ չկա: Առաջարկությունների «փաթեթը» հենված է Ադրբեջանի տարածքային անխախտության հիմքի վրա եւ այսօր ներկայացվելիք փուլ առ փուլ տարբերակը ենթադրում է ԼՂՀ «զարգացում» Ադրբեջանի կազմում: «Օրերս հանդիպել եմ Լեւոն Տեր-Պետրոսյանին եւ ներկայացրել եմ մեր դիրքորոշումը, սակայն ես չեմ կարող պարտադրել ԼՂՀ տեսակետը ՀՀ ղեկավարությանը, ես այդպիսի հույս չունեմ», ասաց պրն Ղուկասյանը: Ըստ իրեն, Դարաբաղը համայն հայության խնդիր է եւ հարցի յուրահատկությունը թույլ չի տալիս տվյալ իրավիճակը համեմատել Բոսնիայի սերբերի պարագայի հետ: Արկադի Ղուկասյանի կարծիքով, դա կոռեկտ չէ: ԼՂՀ նախագահը նշելով համապատասխան քարոզչական մեխանիզմների թուլության մասին, առանձնահատուկ կերպով կարեւորեց համայն հայության աջակցության անհրաժեշտությունը: Միեւնույն ժամանակ նա նշեց, որ տվյալ հարցի կապակցությամբ իր եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի միջեւ եղած տարաձայնությունները մտադիր չէ «պարզել զանգվածային լրատվամիջոցներով, այլ գերադասում է գործել ներքին՝ կաբինետային կարգով»:

ԱԺ-30 ՐՈՊԵ

Քաղաքական հայտարարություններ ապահաղթականացված պատգամավորների համար

Կանոնակարգի համաձայն, Ազ-ի հոկտեմբերի 7-ի նիստի ավարտից առաջ 30 րոպե տրամադրվեց պատգամավորներին քաղաքական հայտարարությունների համար: Եվ քանի որ օրակարգը սպառվել էր ժամը 15.30-ին, ուստի ժամը 17.30-ին մեր առաջ քաղաքականացված պատգամավորների բացարձակ մեծամասնությունն իր ներկայությամբ չպատվեց Ազ-ի նիստը, ինչի արդյունքում դահլիճում ներկա էին 15 պատգամավորներ, որոնցից 6-ը հայտարարությունների համար հերթագրվողներն էին: Դավիթ Շահնազարյանն անդրադարձավ սեպտեմբերի 15-ին ՌԴ Պետդումայի ընդունած որոշմանը, որով Պետդուման աջակցություն է հայտնում Ռուսաստան-Բելառուս դաշինքին միանալու «Հայաստանի նախաձեռնությանը»: Շահնազարյանն այդ որոշումը որակեց որպես միջամտություն ինքնիշխան Հայաստանի ներքին գործերին: Շահնազարյանը կոչ արեց Ազ-ի խմբակցություններին, խմբերին, որպեսզի անցկացվեն լսումներ, ինչի արդյունքում Ազ-ն համապատասխան դիրքորոշում պետք է որդեգրի: Այնուհետեւ հայտարարությամբ հանդես եկավ Էդ. Եգորյանը: Նա նշեց, որ առաջիկա 2-3 տարին վճռորոշ է լինելու Հայաստանի համար: «Հայրենիք» պատգամավորական խմբի անունից Եգորյանը հարկ համարեց ժողովրդին զգուշացնել մեծ վտանգից: Ըստ «Հայրենիքի», Հայաստանի իշխանությունները չեն ուզում ընդառաջ գնալ միջազգային հանրությանը եւ չեն ուզում Հայաստանում հաստատել ժողովրդավարություն: Ժողովրդին ակտիվության կոչ անելով, Եգորյանն ընդգծեց, որ փորձ է արվում Ազ-ին եւ ժողովրդին փաթաթել ընտրությունների օրենքի մի այլանդակ նախագիծ, որով չեն ապահովում ազատ եւ արդար ընտրությունների մեխանիզմները:

Արթուր Բաղդասարյանի հայտարարությունը վերաբերում էր արտգործնախարարության եւ խորհրդարանի փոխհարաբերություններին:

Նիստերից մեկի ընդմիջմանը հրավիրված ճեպազրույցում Բաղդասարյանը ԱԳՆ մամուլի խոսնակի հայտարարությունը որակեց որպես «անձնական վիրավորվածության» արտահայտություն: Ըստ Բաղդասարյանի, խոսքը վերաբերում էր օգտակար համագործակցության հաստատմանը, մանավանդ հիմա, երբ քննարկվում է եվրախորհրդին Հայաստանի անդամակցության հարցը: Ստրասբուրգում փախստականների հարցերի քննարկման ժամանակ ՀՀ ԱԳՆ-ից որեւէ պաշտոնյա ներկա չի եղել: Բաղդասարյանը նկատեց, որ ցանկացած քննադատություն ԱԳՆ-ն հիվանդագին է ընդունում, մինչդեռ ինքն ընդամենը մտահոգություն է հայտնել: Բաղդասարյանն իր տարակուսանքը հայտնեց Ազ արտաքին հարցերի հանձնաժողովի պասիվ դիրքորոշումից խնդրո առարկայի վերաբերյալ:

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տալիս
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Խմբ 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍՍՐԳԻՍ ՍՍՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

Երեկ Արմենիայի մամուլի սրահում տեղի ունեցավ բնապահպանության նախարարի անդրանիկ, իր խոսքերով, միջանկյալ մամուլի ասուլիսը (հանգի առջևում «հարյուր օրն է»), որի ընթացքում ներկայացվեցին նախարարության կառուցվածքը, ոլորտները եւ խնդիրները: Նախարարությունում գործում են Հայանտառը, երկրաբանական վարչությունը, Հայհիդրոմետը, ինչպես նաեւ հանրապետական բնապահպանական տեսչությունը, Մոնիտորինգի կենտրոնը, Երեւանի պետական տեսչությունը: Կարեւոր ոլորտ են հատուկ պահպանվող տարածքները (Խոսրովի, Դիլիջանի, Շիկահողի արգելոցներ, Սեւանի ազգային պարկ եւ Որդան կարմիրի արգելոց Արմավիրի մարզում): Նախարարության ուշադրության կենտրոնում Սեւանի հանրապետության խմելու ջրի աղբյուրի, բնապահպանությունն է: Վերջինիս ճգնաժամը նախարարը բաժանեց երկու մասի՝ խորհրդային (որի ընթացքում Սեւանը սկսեց հանրապետության արդյունաբերությունը եւ գյուղատնտեսությունը զոհաբերելով իր 16-17 մետրը) եւ հետխորհրդային, երբ Հայաստանը «խժռող» էներգետիկ ճգնաժամը Սեւանի ջուրն իջեցրեց եւս 1 մետր 80 սմ-ով: Պրն Շահազիզյանը տեղեկացրեց, որ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ լճի մակարդակն, այնուամենայնիվ, բարձրացել է 5 սմ-ով, իսկ էներգետիկ նպատակով օգտագործվող ջրի ծավալը 50 միլիոն խոր. մետրով զիջում է նախորդ տարվա ցուցանիշին: Այդ թիվն առաջիկայում կդադարի, բացի այդ, ստորերկրյա ջրերի առավել արդյունավետ օգտագործման շնորհիվ փորձ կարվի նվազագույնի հասցնել ոռոգման նպատակով ծախսվող ջրի քանակը, հավաստիացրեց նախարարը:

Անցած 2 ամսում (իր պաշտոնավարման ընթացքում) ձեռք բերված հաջողություններից պրն Շահազիզյանը նշեց օգոստոս ամսին (ձվադրման շրջանում) Սեւանում ձկնորսությունն արգելելու կամպանիան, որի շնորհիվ «ձկնաբուծարանների էական վերադարձություն է արձանագրվել»: Նոյեմբերի կեսերից դեկտեմբերի 25-ը ձկան որսը վերսին կարգելվի: Մարզային իշխանությունները եւ տեղի բնակչությունն ընդունումով են մոտեցել ձեռնարկված քայլերին, եւ ձկնագողությունը նվազել է, սակայն ակտիվացել են որսագողերը մյուս կենդանիների «գծով»: Նկատվել են Կարմիր գրքի մեջ մտցված կենդանիները հանրապետությունից դուրս բերելու դեպքեր: «Իրավական դաշտը թույլ է: Կարմիր լույսի տակով անցնելը 10 անգամ ավելի թանկ է նստում կարգազանցի վրա, քան արգելված որսը», դժգոհեց նախարարը հայտնելով, որ համապատասխան օրինագծերն արդեն տարվա վերջում կներկայացվեն Ազգ ենթարկմանը:

Հարցերին պատասխանելով, պրն Շահազիզյանը զգուշացրեց Երեւանի բնապահպանական իրավիճակը (արդյունաբերական հսկաների կաթվածահար վիճակի «շնորհիվ») Երեւանի օդային ավազանն աղտոտելու-«պատասխանատվությունը» վերադահելով առավելապես անսարք վիճակում երթեւեկող ավտոտրանսպորտի որակապես խիստ վատանգավոր արտանետումներին: Ատոմակայանի աշխատանքի վերահսկողությունը եւ ռադիացիոն իրավիճակը նույնպես բավարար համարվեց, էներգետիկ ճգնաժամին հաջորդած անտառահատումների ծավալը չափազանցված: Իրավիճակին անձամբ ծանոթանալուց հետո նախարարը, որ մինչ այդ կարծում էր, թե Հայաստանում անտառ չի մնացել, եկել է այն եզրակացության, որ վիճակը սարսափելի չէ. զանգվածաբար հատվել է 4000 հեկտար (անտառային ֆոնդի «ընդամենը» 1 տոկոսը), մասնակիորեն՝ 200.000 հեկտար մերժելով այնտեղ կառուցվող շքեղ առանձնատան վարկածը (վերջինս, ինչպես պարզվեց, կառուցվում է արգելանոցի տարածքից դուրս՝ «տուն կառուցելու համար շատ անհարմար տեղում»): Պարզվեց նաեւ, որ առաջիկայում արգելանոցի տարածքը ծրագրվում է ընդարձակել եւս 3-4 հազար հեկտարով:

Նախարարությունը ծրագիր ունի նաեւ Սեւանի ազգային պարկի հետ կապված. երեկ ստորագրված հրամանով նախատեսվում է վերջինիս տարածքում ընդգրկել բոլոր ափամերձ անտառները, եւ այսօր արդեն սկսվում են հողի զույգագրման, ընդունման-հանձնման գործընթացը: Ազգային պարկը կունենա իր ծառայությունը եւ հողատիրները, ծովափնյա անշնորհիվ տնակները, վագոնները եւ այլ անձնական կառույցներ հետագայում կփոխարինվեն ժամանակավոր տիպային կառույցներով, որոնց հեղինակները կորոշվեն հայտարարվելիք մրցույթում: Պատասխանելով մեր հարցին, պրն Շահազիզյանը հաստատեց հանրապետությունում հիդրոօգտագործման անշոշափելի իրավիճակի փաստը, նշելով, որ հակաէրոզիոն կառույցների անգործության հետեւանքով էրոզիոն երեւույթներն ակտիվացել են եւ դրանցում վնասորոշ համարեց մարդու անհաշվենկատ գործունեությունը: Ծրագրերը շատ են, սակայն «դեմ են առնում» ֆինանսական պրոբլեմին, ասաց նա հայտնելով, որ հաջորդ տարվա բյուջեն, թերեւս, ավելի առատաձեռն կլինի բնապահպանության խնդիրների նկատմամբ:

Ավելացնենք, որ գազի պաշարներ, նախարարի կարծիքով, Հայաստանում կլինեն կամ չեն լինի (հիսուն-հիսուն հավանականությամբ), այնպես որ ոգեւորվել չարժե...

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

Բնապահպանական ծրագրերը դեմ են առնում ֆինանսներին

Ասում է նախարար Սարգիս Շահազիզյանը

ԱՆՂՐԱԴԱՐՁ

Պրոֆեսոր Բարսեղովը նախագահ Տեր-Պետրոսյանի մամլո ասուլիսի եւ «Նովոյե վրեմյա» հանդեսում արտահայտած կարծիքների մասին

Հայաստանի նախագահի մամլո ասուլիսի այն հատվածը, որը նվիրված է դարաբաղյան հակամարտության կարգավորման խնդրին, այսօր գլխավորապես մեկնաբանվում է քաղաքական գործիչների կողմից: Սակայն դա իհարկե չի նշանակում, թե պատշտոնական Երեւանի դիրքորոշման հստակեցումը չի գրավել նաեւ մասնագետների ուշադրությունը: Այլ բան է, որ Լեւոն Տեր-Պետրոսյանի վերջին հայտարարությունների որոշ դրդապատճառներ այնպես էին կազմված, որ նույնիսկ ամենահմուտ մասնագետից մի քանի ուշադիր ընթերցում է պահանջում դրանցում թողարկված մտքերն ու մտադրությունները վերծանելու համար: Այդպես է կարծում հայտնի իրավաբան-միջազգայնագետ, Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցություններում դարաբաղյան պատվիրակության փորձագետ, պրոֆեսոր Յուրի Բարսեղովը: «Ազատություն» ռադիոկայանի Մոսկվայի թղթակցին տված հարցազրույցում փորձառու գիտնականը անդրադառնում է ոչ միայն նախագահի երեւանյան մամլո ասուլիսին, այլ նաեւ ռուսաստանյան «Նովոյե վրեմյա» հանդեսի վերջին համարներից մեկում զետեղված Լեւոն Տեր-Պետրոսյանի հարցազրույցին:

– Պրն Բարսեղով, շատերն այսօր գնահատում են Երեւանի մոտեցումներում ի հայտ եկած նոր երանգները որպես անթաքույց նահանջի, նույնիսկ որպես Ղարաբաղի շահերը բախտի քմահաճույքին հանձնելու միտման դրսեւորում: Ի՞նչ եք կարծում այդ մասին:

– Ես կասեի, որ իմ ուսումնասիրած երկու նյութերն էլ, մեղմ ասած, հետաքրքիր չէր ընկալել: Դրանց իրական բովանդակության վերհանումը նույնիսկ ինձ համար դյուրին գործ չէ: Այդուհանդերձ, մանրազնին վերլուծության արդյունքում եկա հետեւյալ եզրահանգումների:

Նախեւառաջ, նախագահը ոչ մի տեղ ուղղակիորեն չի մերժում Ղարաբաղի անկախ կարգավիճակին հասնելու հնարավորությունը: Սակայն ասվածի համատեքստը գալիս է վկայելու, որ դա անհնարին է համարվում այն պատճառաբանությամբ, որ կամ Ադրբեջանը դրան չի համաձայնի, կամ էլ անկախությանը հետաքրքիր լինելն առաջ կբերի միջազգային հանրության պատժամիջոցներ: Փաստորեն, շարունակելով պնդել, թե միմիայն ԼՂՀ-ն է որոշում ընդունող եւ Հայաստանը պատրաստ է ճանաչել Ստեփանակերտի ընդունած յուրաքանչյուր որոշում, Երեւանը նախկինի պես հանդես է գալիս կարգավորման գործում ճկուն մարտավարության կողմնակից: Եվ արդեն հիմա այն էական ճշտմամբ, որ այդ մարտավարության իրագործումը չի կարող բերել Հայաստանի դեմ ուղղված պատժամիջոցների սահմանման, կամ էլ այնպիսի արդյունքներ ունենալ, որոնք մերժվեն Բաքվի կողմից: Անցնելով այս դիրքորոշմանը համապատասխանող եւ նախագահի արած կոնկրետ առաջարկներին, ես միայն մեկ բան կարողացա ըմբռնել. փոթելով ընդհանուր պետության եւ միասնական պետության միմյանցից էապես տարբերվող գաղափարները, նախագահը հարցի լուծումը տեսնում է Ղարաբաղը նմանօրինակ պետության կազմում ներգրավելու մեջ: Ես այդպես էլ չհասկացա, թե ինչի մասին է խոսքը. Ղարաբաղի եւ Ադրբեջանի կողմից ընդհանուր պետության ստեղծա՞ն, թե՞ Ղարաբաղի մասնակցությամբ հայադրբեջանական դաշնության հիմնադրման մասին: Բացի այդ, հարցազրույցում Հայաստանի նախագահը հիշատակում է Խասավյուրտի համաձայնագիրը: Ես այն տպավորությունը ստացա, որ Խասավյուրտը Տեր-Պետրոսյանին ընդունելի լուծում է թվում: Սակայն հարց է ծագում, թե ի՞նչ նկատի ունի նախագահը Խասավյուրտ ասելով: Եթե խոսքը Խասավյուրտում ստորագրված տեքստի մասին է, ապա այնտեղ ասված է, որ Ռուսաստանի եւ Չեչնիայի միջեւ առկա խնդիրները պետք է լուծվեն միջազգային իրավունքի հիման վրա: Եվ Խասավյուրտը ելնում է այն բանից, որ երկու կողմերն էլ մնում են իրենց դիրքերի վրա: Այսինքն, Ռուսաստանը շարունակում է Չեչնիան իր անբաժանելի մասը դիտել, իսկ Չեչնիան՝ ինքն իրեն անկախ է համարում: Անցկացնելով Խասավյուրտի տրամաբանությունը դարաբաղյան հակամարտության հարթություն, տեսնում ենք, որ տվյալ պարագայում դա չի գործում: Ադրբեջանը մերժում է հակամարտությունը միջազգային իրավունքի հիման վրա լուծելու տարբերակը: Եվ միջնորդները այդ հարցում համամիտ են Բաքվի հետ: Այնպես որ, եթե դիտելու լինենք Խասավյուրտի այս կողմը, ապա նշանակում է, որ Հայաստանի կողմից Ղարաբաղի անկախությանը հետամուտ լինելը չի բացառվում: Սակայն ամենից շատ ինձ անհանգստացնում է հետեւյալ հանգամանքը, չէ՞ որ Խասավյուրտը ոչ միայն իրավական կողմ ունի, այլեւ՝ քաղաքական, ավելի ճիշտ՝ ռազմաքաղաքական: Տվյալ դեպքում նկատի է առնվում հակամարտության հանգրվանային լուծման հնարավորությունը, սկզբից դուրս են բերվում զորքերը, հետո աստիճանաբար փախստականների վերադարձը եւ այլն, հարցը հիմնովին լուծելը թողնելով ապագային: Եվ ահա հենց այս կետվածքով դիտելիս տեսնում ենք, որ Խասավյուրտը միանգամայն շահեկան որոշում հանդիսացավ կողմերից միայն մեկի՝ Չեչնիայի համար: Իսկ Ռուսաստանի համար ոչ այլ ինչ էր, քան նրա ռազմաքաղաքական պարտության արձանագրում: Ղարաբաղի պարագայում բեւեռայնորեն հակառակ իրավիճակ ենք տեսնում, պարտություն կրած Ադրբեջանը Խասավյուրտի բանաձեւի կիրառման դեպքում կվերադարձնի այն ամենը, ինչ կորցրել էր գաղութաշիրակյան բնույթի ագրեսիվ պատերազմի արդյունքում: Իսկ Ղարաբաղը կկորցնի հայկական զորքերի գնով ձեռք բերվածը: Ընդ որում, իրավիճակը, կփոխվի արմատապես եւ անդառնալիորեն: Այսինքն, Ղարաբաղը լիովին կգրկվի փոխընդունելի լուծմանը հետամուտ լինելու հնարավորությունից: Լուծում, որը ներկայումս թեպետ դյուրին չի թվում, բայց սկզբունքային առումով հնարավոր է, քանի որ ներկա դրությամբ Ադրբեջանը քաղաքական շարժառիթներ ունի փոխզիջման ուղիներ որոնելու: Ղարաբաղյան հակամարտությանը Խասավյուրտի օրինակով լուծում տալու դեպքում այդ շարժառիթների հիմքն իսպառ կվերանա: Այդ իսկ պատճառով ափսոսանքով պետք է հայտնեմ, որ բոլորովին չեմ կիսում նախագահի եւ նրա վարչակազմի մոտեցումը: Այն է, հակամարտության կարգավորման փորձը հանգրվանային լուծման ճանապարհով:

Ըստ պրոֆեսոր Յուրի Բարսեղովի, դարաբաղյան հակամարտության շուրջ բանակցություններում հանգրվանային լուծումն ի սկզբանե հանդիսացել է ադրբեջանական կողմի առաջարկ: Ուստի, հստակ արտահայտվելով դրա ընդունման օգտին, Լեւոն Տեր-Պետրոսյանը փաստորեն հրապարակավ մերժում է ԼՂՀ-ի կողմից առաջարկվող փաթեթային լուծման տարբերակը եւ համերաշխվում Բաքվի դիրքորոշման հետ: Ավելին՝ նախագահի վերջին քայլը խարխլում է այն հավասարակշռությունը, որի վրա այսօր խարսխվում է ոչ միայն խաղաղությունը, այլեւ խնդրի փոխընդունելի լուծում գտնելու կողմերի ցանկությունը: Ղարաբաղյան պատվիրակության փոձագետը պարզում է որակում այն բոլոր տարբերակները, որոնք նախատեսում են Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովում՝ միջազգային ուժերի օգտագործման միջոցով: Ըստ նրա, արցախցիների անվտանգության ապահովման միակ երաշխիքը ԼՂՀ-ի գոյությունն է Ադրբեջանի կազմից դուրս: Անկախ Ղարաբաղին առաջարկվելիք կարգավիճակի տարբերակներից, Ադրբեջանի կազմում նրա անվտանգության մասին խոսք անգամ լինել չի կարող՝ հաստատված է հայտնի իրավաբան-միջազգայնագետ Յուրի Բարսեղովը:

Վեդի. Փախստականների բնակարանները ապօրինաբար զբաղեցրել են ուրիշները

ԵՐԵՎԱՆ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՊՏՆԻՊԵՍ: ՀՀ սոցապ նախարարության բնակարանների կարիք ունեցող փախստականների հաշվառման եւ բնակելի տարածությունների հատկացման հանձնաժողովի որոշմամբ, 56 կարիքավոր փախստականներ Վեդու շրջանի Ոսկեպար գյուղում ապահովվել են բնակարաններով, որոնք կառուցվել են ՄԱԿ-ի փախստականների գրասենյակի միջոցներով: Սակայն նրանցից 25-ը չկարողացան գտնել իրենց բնակարանները, քանի որ նրանց հատկացված բնակարանները ապօրինաբար արդեն երկու ամիս զբաղեցրել են ուրիշները եւ մտադիր չեն զիջելու իրենց իրերը:

Ինչպես պարզվեց, ՀՀ սոցապ նախարարության փախստականների վարչության առջեւ հավակված օրինական բնակարանատերերը, օրինապահ մարմինները այս հարցում ցուցաբերում են «կասկածելի դանդաղկոտություն»: Բոլոր բողոքները տանում են Վեդու շրջանի դատախազություն, որը կարող էր մի քանի ժամում ազատել բնակարանները ապօրինաբար զավթած բնակիչներից եւ հատկացնել օրինական տերերին:

Ստացվել է Վեդու դատախազության պատասխանը, ըստ որի, նկատի ունենալով այն փաստը, որ զավթողներից շատերը նույնպես փախստականներ են եւ բնակարանի կարիք ունեն, ուստի բողոքողները հարկ է, որ դիմեն դատարան պարզելու, թե ով է բնակարանի իսկական տերը: Ըստ բողոքավորների, Վեդու դատախազ Բ. Նազարյանը բերում է նաեւ փաստարկ, որ տները փախստականները զբաղեցրել են ոչ ինքնագլուխ, բայց թե ում «գլխավորությամբ» չի նշվում: Սրանով, փաստորեն, ստեղծվում է քաշքշուկ, անտեսվում է բնակտարածություն հատկացնող պետական հանձնաժողովի որոշումը:

Բողոքող փախստականներն առարկում են դատարան դիմելու առաջարկը, քանի որ արդեն ունեն օրինական փաստաթղթերը, եւ, ինչպես իրենք են ասում, միշտ էլ կգտնվեն մարդիկ, որոնք բնակտարածության կարիք ունեն, բայց դա նրանց իրավունք չի տալիս ներխուժելու ուրիշների բնակարանները:

ԱԶԳ

Տեսակետ կարդացվեր

Նախարարությունն առաջին հայացքից

Սա արտաքուստ ու նաեւ ներքուստ խիստ տարբերվում է Հայաստանի մյուս նախարարություններից: Արեւմտյան ճաշակը, նորաձեւությունը, ափխարհում ընդունված դիզայնը, հարաբերություններն այս հաստատությանն այլ տեսք են տվել: Ճաշակով վերանորոգում, մուտքի մոտ խաղաֆավարի ոստիկան, բարեկիրթ վերաբերմունք եւ պատրաստակամ հերթապահ, որ վկայականդ փոխում է այցելուի քարտով: Հյուրասենյակում ծառայություն դիմողները հենց նախասրահում կարող են մոտենալ այդ ծառայության հերթապահին: Ցանկացած դիմում-բողոք կընդունվի ընդհանուր բաժնում, կհամարակալվի եւ կգնա դիմումների ու գանգատների բյուրո, որտեղ բարեհամբույր (հեռուստատեսությունից ծեզ հայտնի) Նելլի Մաթեւոսյանը կափսի աջակցել խաղաֆացուն:

Վեց հարկանի շենքի երկու հարկն է օգտագործում արտաքին գործերի նախարարությունը, մյուս հարկերում նորոգումը շարունակվում է, ավելի ճիշտ՝ ֆինանսական պատճառներով ձգձգվում: Սակայն այդ երկու հարկը այլ են շոյում հարմարավետությամբ, ափխատելու համար անհրաժեշտ ամեն ինչի առկայությամբ: Նախարարությունը հատկապես այլի է ընկնում տեխնիկական զինվածությամբ եւ կառի միջոցներով: Գրեթե բոլոր սեղաններին համակարգիչներ կան, միացած են «Ինտերնետ»-ին: Ֆաքսերի, հեռուստացույցների, հեռախոսների ու կառի մյուս տեսակների մասին էլ չենք ասում: Տարեսկզբին, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ, իրականացվել է «Նախարարության կառուցվածքային կարողությունն ամրապնդելու» ծրագիրը, որի շրջանակներում էլ նախարարությունը վերազինվել է: Այս շենքում տարեց կամ անփույթ արտաքինով, անխնամ հագնված մարդ չես տեսնի. տղամարդիկ կոստյումներով ու փողկապներով են, կանայք (ավելի ճիշտ՝ աղջիկները, որոնք մի քանի անգամ ավելի շատ են, քան մյուս նախարարություններում)՝ կարճ փեշերով: Երիտասարդ զրուցակիցներիցս մի քանիսը այլի էին ընկնում կայացող դիվանագետի մտքի ճկունությամբ, հարցերը շրջանցելու, խաղաֆավարի մերժելու, բայց միեւնույն ժամանակ զրուցակցի երախտագիտությանն արժանանալու շնորհիվ: Ընդհանրապես մթնոլորտն այստեղ ձգված է, պաշտոնական: Արտաքինում ընդունված չափանիշներով՝ ափխատակազմի մտերմություն, հայկական գնալ-գալ, տալ-առնել գրեթե չկա: Բնականաբար, չկան նաեւ դրանց բացասական հետեւանքները: Դրսի հետ առնչվելու հանգամանքը իր բարերար ազդեցությունն է գործել մարդկանց, նրանց հարաբերությունների, ափխատառնի վրա: Իսկ կոկիկ միջավայրն ինքնին նրբավարություն է թելադրել:

Միեւնույն ժամանակ, այստեղ նույն բյուջետային ափխատավարձն է, ինչ մյուս նախարարություններում: Այսինքն՝ մեծ ջանքերի, նաեւ հովանավորչության միջոցով արտաքին գործերի նախարարություն մտնելու իմաստը մեկն է. երկարատեւ կամ կարճատեւ գործուղման մեկնելը (բարձր վարձատրություն, բարեկեցիկ երկրում շրջագայելու, ընտանյոք հանդերձ ապրելու հնարավորություն եւ այլն): Տարիներ շարունակ սրա շուրջ անառողջ մթնոլորտ է տիրել, ոմանք անարժան ձեւով հայտնվել են արտասահմանում, իսկ մյուսները՝ զրկված են եղել անգամ հուսալուց, թե երբեւէ կմեկնեն: Չի եղել ընտրության մեխանիզմ, բացի որոշակի մարդկանց սուբյեկտիվ կարծիքը: Այժմ փորձում են մտցնել ոստիկանության սկզբունքը, երբ գրեթե բոլորը, ինչ-որ ճանապարհ անցնելուց հետո, համոզված կլինեն, որ կգա նաեւ իրենց հերթը: Իսկ մեկնողները՝ մի շրջան դրսում ափխատելուց հետո, կվերադառնան՝ իրենց տեղը զիջելով մյուսներին: Նախարարն ասում է՝ վեցամսյա գործուղումներ այլեւս չեն լինելու, չեն լինելու նաեւ զրոյից դիվանագիտական աստիճան շնորհելու դեպքեր («դեսպան դառնալու համար պետք է դպրոց անցնել»): Չմոռանամ հիշատակել, որ դեսպանին նշանակում է ՀՀ նախագահը՝ նախարարի ներկայացմամբ, թեեւ «դիվանագիտական ներկայացուցչությունները նախարարության համակարգի բաղկացուցիչ մասն են»:

Քանի որ տեղեկատվության մի մեծ մասն այստեղ կրում է «գաղտնի» նշումը, պաշտոնյաները հակված չեն շատախոսելու: Որպես կանոն, նրանք, առանց մամլո խոսնակի թույլտվության լրագրող չեն ընդունում: Ընդունելուց հետո էլ իրենք են փորձում հարցազրույց կազմակերպում՝ ծշտելու այցիր նպատակը: Ընդհանրապես Հասարակայնության հետ հարաբերությունների դեպարտամենտը այս նախարարության կարեւորագույն թեւերից է: Գուցե դա նրանից է, որ Հայաստանում միակ պրոֆեսիոնալ (բառիս բուն իմաստով) մամլո քարտուղարն է ղեկավարում այն, թեեւ անցյալում Արսեն Գասպարյանը մամուլի հետ չի առնչվել. Թուրքիայի բաժինն է ղեկավարել, ապա արտասահմանում ափխատել: Նախարարության այս թեւի մեջ են մտնում լրատվամիջոցների հետ հարաբերությունների եւ տեղեկատվության բաժինները, որոնք, չնայած առանձնացված են, բայց, թերեւս, իրար կրկնում են: Այս բաժանմունքում կա նաեւ հրատարակչական բաժին եւ գրադարան: Նախարարությունը երեք ամիսը մեկ տպագրում է անգլերեն լեզվով բանբեր, որն ուղարկվում է ափխարհի տարբեր ծայրերը:

Նոր կառուցվածք, հին խնդիրներ

Մինչեւ նախարարության նոր կառուցվածքին անցնելը, որը կառավարությունում հաստատվել է 15 օր առաջ, կուզենայի պատմական փորձիկ ակնարկ անել, մանավանդ՝ բոլոր զրուցակիցներս նախարարության տեղի ու դերի մասին հարցին սկսում էին պատասխանել դրանից: 1944-ին է ստեղծվել ՀՍՍՀ արտաքին գործերի ժողկոմխորհը, որը 1946-ից մինիստրություն կոչվեց: Այն ուներ արձանագրային-հյուրասենյակային եւ քաղաքացիական ինֆորմացիայի բաժիններ: Այս նախարարությունը փաստորեն ֆորմալ բնույթ է կրել, քանի որ արտաքին հարաբերություններն իրականացրել է ԽՍՍՀ արտգործնախարարությունը: Այսինքն՝ եթե գյուղատնտեսության, մշակույթի, տրանսպորտի նախարարությունները խորհրդային Հայաստանում լիարժեք գործել են, ապա մի քանի հոգանոց արտգործնախարարությունը նման ափխատանքի ավանդույթներ չի ստեղծել եւ անկախ երկրին փոխանցելու ոչինչ չի ունեցել: Անկախությունից հետո է այս նախարարության հիմքը դրվել: Մի կողմից, չնայած թվացյալ բացասական դերին, կարծում եմ, սա դրական նշանակություն պիտի ունենար՝ կադրերների, անցյալի ծանր բեռի բացակայության իմաստով: Երբեմն ավելի հեշտ է զրոյից սկսել, քան ուրիշի փչացրածն ուղղել: Ինչեւէ. նախարարությունում կարծում են, որ այս տարիներին ահռելի ափխատանք են կատարել. ստեղծել են կառույց ներսում եւ դրսում, ձեւավորել են լավ հարաբերություններ ափխարհի շատ երկրների հետ, միացել են միջազգային կոնվենցիաներին ու կազմակերպություններին, ստացել են վարկեր, կնքել են պայմանագրեր: Դժվար է կռահել արածը եւ զատել դրանցից ո՞րն է «ինտերցիոն» բնույթ կրել, երբ ափխարհն, իր մշակած ավանդույթների ոգով եւ իր անվտանգության ու բարեկեցության շահերից ելնելով, գնացել է մեզ ընդառաջ: Եվ երբ է գործել զուտ հայկական դիվանագիտությունը:

Այսօր արտաքին քաղաքականության ուղղվածությունը նախարարությունում բաժանում են երեք մասի՝ Լեռնային Ղարաբաղ, ափխարհի հետ ինտեգրացիա եւ երկկողմ (եռակողմ, բազմակողմ) հարաբերություններ:

Մեր նախարարությունները ներսուդրսից

ՀՀ արտաքին քաղաքականության միջնաբերդո՞ւմ

ԱԳՆ. հիմնարկը կոկիկ է, աշխատակիցները՝ վայելուչ, լուծելիք հարցերը՝ բարդ ու պատասխանատու

Չափազանց բարդ խնդիր է իր առաջ դնում այն լրագրողը, որը որոշում է գրել արտաքին գործերի նախարարության մասին: Այստեղ ինֆորմացիայի մեծ մասը կամ գաղտնի է եւ թեզ պարզապես անհասանելի. կամ՝ եթե ինչ-ինչ եղանակներով հասանելի, ապա հրապարակման ոչ ենթակա: Սակայն մեր խնդիրը ոչ թե արտաքին քաղաքականության մանրամասները հրապարակելն է (կամ. ինչպես ասում են այս գերատեսչությունում. պետական գաղտնիքները բռնամուն հրամցնելը). այլ՝ արտաքին գործերի նախարարությունը որպես կառավարման մարմին ներկայացնելը:

խարարության կարեւորագույն թեւերից է: Գուցե դա նրանից է, որ Հայաստանում միակ պրոֆեսիոնալ (բառիս բուն իմաստով) մամլո քարտուղարն է ղեկավարում այն, թեեւ անցյալում Արսեն Գասպարյանը մամուլի հետ չի առնչվել. Թուրքիայի բաժինն է ղեկավարել, ապա արտասահմանում ափխատել: Նախարարության այս թեւի մեջ են մտնում լրատվամիջոցների հետ հարաբերությունների եւ տեղեկատվության բաժինները, որոնք, չնայած առանձնացված են, բայց, թերեւս, իրար կրկնում են: Այս բաժանմունքում կա նաեւ հրատարակչական բաժին եւ գրադարան: Նախարարությունը երեք ամիսը մեկ տպագրում է անգլերեն լեզվով բանբեր, որն ուղարկվում է ափխարհի տարբեր ծայրերը:

Նոր կառուցվածք, հին խնդիրներ

Մինչեւ նախարարության նոր կառուցվածքին անցնելը, որը կառավարությունում հաստատվել է 15 օր առաջ, կուզենայի պատմական փորձիկ ակնարկ անել, մանավանդ՝ բոլոր զրուցակիցներս նախարարության տեղի ու դերի մասին հարցին սկսում էին պատասխանել դրանից: 1944-ին է ստեղծվել ՀՍՍՀ արտաքին գործերի ժողկոմխորհը, որը 1946-ից մինիստրություն կոչվեց: Այն ուներ արձանագրային-հյուրասենյակային եւ քաղաքացիական ինֆորմացիայի բաժիններ: Այս նախարարությունը փաստորեն ֆորմալ բնույթ է կրել, քանի որ արտաքին հարաբերություններն իրականացրել է ԽՍՍՀ արտգործնախարարությունը: Այսինքն՝ եթե գյուղատնտեսության, մշակույթի, տրանսպորտի նախարարությունները խորհրդային Հայաստանում լիարժեք գործել են, ապա մի քանի հոգանոց արտգործնախարարությունը նման ափխատանքի ավանդույթներ չի ստեղծել եւ անկախ երկրին փոխանցելու ոչինչ չի ունեցել: Անկախությունից հետո է այս նախարարության հիմքը դրվել: Մի կողմից, չնայած թվացյալ բացասական դերին, կարծում եմ, սա դրական նշանակություն պիտի ունենար՝ կադրերների, անցյալի ծանր բեռի բացակայության իմաստով: Երբեմն ավելի հեշտ է զրոյից սկսել, քան ուրիշի փչացրածն ուղղել: Ինչեւէ. նախարարությունում կարծում են, որ այս տարիներին ահռելի ափխատանք են կատարել. ստեղծել են կառույց ներսում եւ դրսում, ձեւավորել են լավ հարաբերություններ ափխարհի շատ երկրների հետ, միացել են միջազգային կոնվենցիաներին ու կազմակերպություններին, ստացել են վարկեր, կնքել են պայմանագրեր: Դժվար է կռահել արածը եւ զատել դրանցից ո՞րն է «ինտերցիոն» բնույթ կրել, երբ ափխարհն, իր մշակած ավանդույթների ոգով եւ իր անվտանգության ու բարեկեցության շահերից ելնելով, գնացել է մեզ ընդառաջ: Եվ երբ է գործել զուտ հայկական դիվանագիտությունը:

Այսօր արտաքին քաղաքականության ուղղվածությունը նախարարությունում բաժանում են երեք մասի՝ Լեռնային Ղարաբաղ, ափխարհի հետ ինտեգրացիա եւ երկկողմ (եռակողմ, բազմակողմ) հարաբերություններ:

Արցախյան խնդրի առկայությունը, ոմանց կարծիքով, նախարարության (ընդհանրապես մեր արտաքին քաղաքականության) խութերից է: Ցանկացած քայլ, վճիռ, հանդիպում, բանակցություն, պայմանագիր կնքելիս վերոնշյալ խնդիրը ոստոնյակի դեր է խաղում: Ամեն ինչ հանգում է դրան եւ անցնում է դրա միջով: Շլիներ այդ խնդիրը, ասում են, ամեն ինչ այլ կլիներ: Սակայն կա տրամագծորեն հակառակ կարծիքը՝ Արցախյան խնդիրը նաեւ փրկարար դեր է խաղում՝ ցանկացած ադաբնորհության, հարցերը լուծելու, տնտեսությունը չափուժացնելու փաստի դեմքում մատնացույց է արվում Ղարաբաղը: Այն այս իշխանությունների շիրման է: Չկա հստակ դիտորդում, չկա այս հարցում հետեւողականություն, քայլերի հաշվարկված հերթագայում: Եվ իզուր չէ, որ նախագահի ասուլիսը մեր հարեւանները որակել են որպես իրենց դիվանագիտության հաղթանակ: Նախարարությունում պնդում էին, որ այդպես չէ՝ եթե Հայաստանը չի ճանաչվել ագրեսոր, չեն կիրառվում պատժամիջոցներ, չկա էմբարգո, մեզ հետ չեն խզում հարաբերությունները, դա մեր դիվանագիտության հաղթանակն է: Միեւնույն ժամանակ նշում էին, որ շուտով եւրախորհրդի անդամ կդառնանք, որ Համաշխարհային բանկը մեզ ճանաչել է որպես վարկունակ երկիր, որ ամերիկյան Էխիմ բանկի ցուցակի մեջ ենք մտել եւ այլն: Ինչ վերաբերում է ներդրումներին եւ տնտեսական պայմանագրերին. նախարար Ալեքսանդր Արզումանյանը թեեւ թվեր չնշեց, բայց ընդգծեց, որ դրանք հիշ են: Այստեղ միայն քաղաքական գործոնը չէ պատճառը: Բազմաթիվ առաջարկներ նախարարության միջոցով ուղարկվել են այլ գերատեսչություններ եւ կորել նրանց բյուրոկրատական միջանցքներում: Արտաքին գործերի նախարարությունը չունի վերահսկման ֆունկցիա: Այստեղ մեծ հույսեր են կապում ներդրումների պետական հանձնաժողովի հետ (այդ մասին նախագահը նշեց իր ասուլիսում), որը նոր մեխանիզմների ստեղծման գործում կարեւոր դեր կխաղա: Ուշադրություն դարձրեք. մեխանիզմների ստեղծման մասին նոր-նոր ենք խոսում, իրականում արդեն ներդրումների պտուղները պետք է քաղեինք: Այստեղ նախարարության գործունեության եւս մի բացի մասին պիտի խոսվի: Արտաքին գործերի նախարարությունը ոչ միայն պիտի խողովակի դեր խաղար, այլեւ՝ կենտրոնացներ ու համակարգեր արտաքինի հետ բոլոր միջգերատեսչական, միջպետական հարաբերությունները: Այժմ ծայրային նախարարությունները ուղիղ կապի մեջ են մտնում արտասահմանյան իրենց գործընկերների հետ, նախարարները մեկնում են արտասահման եւ ստորագրում փաստաթղթեր, որոնք ոչ միայն միջազգային նորմերին են հակասում, այլեւ՝ մեր օրենսդրությանը: Թեեւ բոլոր նախարարություններն ունեն արտաքին հարաբերությունների պատասխանատու բաժիններ, որոնք պիտի ԱԳ նախարարության հետ համաձայնեցված գործեն: Ընդհանրապես՝ ինչ վերաբերում է գործուղումներին: Բոլոր պաշտոնական ուղեւորությունները ծեւակերպվում են նախարարության հյուրասենյակային բաժնում: Արտաքին գործերի նախարարությունում ասում են, որ դրանց քանակը գերազանցում է բոլոր թույլատրելի սահմանները: Որեւէ կոնֆերանսի «Ինտերնետ»-ով հետեւելու փոխարեն, պատասխանատու չինովնիկական խումբ է մեկնում՝ տեղում «հետեւելու» ափխատանքներին: Այստեղ կարծում են, որ պետական միջոցների, նաեւ դրսի օգնությունների փոշիացում է գնում:

Նոր կառուցվածքով արտաքին գործերի նախարարությունը ռեգիոնալ եւ ֆունկցիոնալ ծեւի զուգակցում է իրականացրել: Ասենք, կա ԱՊՀ, Հյուսիսային, Կենտրոնական եւ Հարավային Ամերիկայի (սրանք առաջ անջատ էին), Մերձավոր եւ Միջին Արեւելքի, Առաջին եվրոպական եւ երկրորդ եվրոպական (նախկինում սրանք միասին էին) դեպարտամենտներ (հայերեն՝ բաժանմունք): Այս ռեգիոնալ բաժիններին զուգահեռ կան նաեւ ֆունկցիոնալ բաժիններ՝ սպառազինությունների վերահսկման եւ միջազգային անվտանգության, միջազգային կազմակերպությունների, միջազգային տնտեսական համագործակցության, իրավապայմանագրային, պետական արարողակարգի եւ այլն: Նախարարության գլխավոր քարտուղարը (1997-ի սկզբին է այս պաշտոնը ստեղծվել), որը պատասխանատու է կատարողականի համար, գտնում է, որ այս կառուցվածքը ծառայում է ժառանգականությունն ապահովելուն: Ասել է թե՝ նախարարներ-փոխնախարարներ կգան ու կգնան, իսկ նախարարությունը, որը կափսի հստակ մեխանիզմի պես, այդ բոլոր «պտուտակները» կընդգրկի իր մեջ եւ կարունակի անխափան ափխատանքը: Կան նաեւ այլ կարծիքներ. ոչ մի հստակ մոդել չկա, այստեղից-այնտեղից ինչ-որ բաներ են վերցվել, որոնք հայտնի չէ՝ կափսատե՞ն, թե՞ ոչ: Կամ՝ ասում են, որ նախատեսված էին ավելի հստակ փոփոխություններ, բայց վերջում ինչ-որ կիսաս-պրաս բան ստացվեց: Այսօր հրամանագրված են միայն դեպարտամենտների ղեկավարները, այն էլ՝ երեք ամսով: Այսինքն՝ նախարարությունն անցումային բրջանում է, շատերը չգիտեն՝ որտեղ են ափխատելու: Դրանից էլ անորոշությունն ու անհանգիստ վիճակը: Դեպարտամենտների ղեկավարների մի մասը ժամանել է դրսից՝ ռոտացիայի սկզբունքով, մյուսները՝ մեկնել են:

Դեսպանություններ

Ափխարհի 26 երկրներում դիվանագիտական ներկայացուցչություններ ունենք: Դրանց խնդիրները նախարարության տարբեր ափխատողներ տարբեր կերպ են ներկայացնում: Փոխնախարար Արմեն Բայբուրդյանը (նախկինում Լոս Անջելեսում գլխավոր հյուրասենյակ, մեկ ամիս առաջ է փոխնախարար նշանակվել) նրանց ֆունկցիաներից առանձնացնում է սփյուռքահայության մեջ պետական մտածողության արմատավորումը: Մամլո խոսնակ Արսեն Գասպարյանն ասում է. այնտեղ, որտեղ կա տնտեսական շահ, կա դեսպանություն: Գլխավոր քարտուղարն ընդգծում է ինֆորմացիայի եւ կադրի իրականացման անհրաժեշտությունը: Այլք կարծում են, որ դեսպանության գլխավոր խնդիրը հայաստանյան իշխանությունների քաղաքականության պրոպագանդան է, եւ նրանց դիրքերի ամրապնդումը: Ասում են նաեւ, որ դեսպանատները մեր դեմքն են, շփումների իրականացման հնարավորություն-կամուրջը, մեր երկրի քաղաքացիների շահերի պաշտպանը եւ այլն:

Դրանք թեեւ մեր բյուջեի վրա էժան չեն նստում (ոչ պաշտոնական տվյալներով, տարեկան 150-300 հազար դոլար), բայց միայն ափխատավարձի եւ վարձակալության գումարն է պետությունը վճարում: Հաճախ դեսպանատան ափխատողների ափխատավարձն էլ է ուշանում: Ինչ վերաբերում է ափխատավարձին. թեեւ տվյալ երկրի դեսպանատների մեջ մերոնք ամենացածրն են ստանում, բայց մեկ-երկու տարում տնտեսած գումարը հնարավորություն է տալիս վերադառնալով մեկ-երկու տարի այստեղ անհոգ ապրել: Այնտեղ, որտեղ կա հայկական գաղթօջախ, դեսպանատունը ֆինանսական օժանդակություն է ստանում: Դեսպանությունը Հայաստանի եւ տվյալ երկրի միջեւ կապը իրականացնում է տարբեր եղանակներով: Կազմակերպում է միջոցառումներ, այցելություններ եւ այլն: Սակայն կա կարծիք նաեւ, որ դեսպանություններն ավելորդ շեղություն են, որ դրանց դերը կարի միջոցների տարածման պայմաններում անիմաստ է դառնում, որ տնտեսական կապեր ստեղծել դրանք անընդունակ են, ներդրումներ բերել՝ նույնպես: ՀՀ շատ բարձրաստիճան պաշտոնյաներից մեկն այն հարցին, թե ինչո՞ւ երբեմն տեւականորեն դեսպանների պաշտոնները թափուր են մնում, պատասխանեց. «Ավելի լավ չէ՞ թափուր լինեն, քան լինեն այնպես, ինչպես այսօր Ֆրանսիայում է կամ անցյալում Ռուսաստանում»: Ընդհանրապես ասում են դեսպանների ակտիվությունը հայրենիքից չի խրախուսվում: Նրանք, որպես կանոն, քաղաքական գործիչներ են, նախկինում բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք մի տեսակ քաղաքական աքսորի են ենթարկվել: «Անցյալը» նրանց մղում է անհամարձակ ու զգուշավոր վարքի՝ թելադրված անախորժությունների մեջ չընկնելու զգուշավորությամբ:

Նախարարության միջանցքներում

Ընդհանրապես արտաքին գործերի նախարարության սվերային կողմի մասին հավաստի տեղեկություններ հավաքելը անհավանականի ոլորտից է: Այստեղ ափխատողների մի մասը գերատեսչական հայրենասիրության եւ պետական օրինավոր ծառայողի լավ համադրությունն են: Ուստի կփորձեմ շարադրել այն, ինչ հաջողվեց որսալ խիստ զգույշ ու վախեցած շշուկներից: Արտաքին քաղաքականության մեջ հստակ կողմնորոշման բացակայությունը, երբ թաքնվում ենք «չկան մշտական բարեկամներ եւ մշտական թշնամիներ» լոզունգի տակ, վնասում է մեզ: Խիստ ռուսամետ քաղաքականությունը, հատարակության պրոռուսական շեղվածությունը մեզնից վանում են եվրոպան: Սեզ վնասում է մաքի Ղարաբաղյան հարցում կոշտ դիրքորոշումը. Լիսաբոնյան վեհոն շատ վատ ընկալվեց եվրոպայում: Ընդհանրապես Լիսաբոնը մեր դիվանագիտության ոչ միայն պարտությունն է, այլեւ՝ մի էջ, որը դեռեւս ուսումնասիրված չէ, դասեր քաղված չեն, մեղավորները պատժված չեն: Նախարարությունը արտաքին քաղաքական հարցերի մշակումներ, վերլուծություններ, ռազմավարական ուսումնասիրություններ չի կատարում: Սա սոսկ գրագրություն իրականացնող, այցելություններ կազմակերպող հաստատություն է: Քաղաքականության մշակումը կատարվում է ուրիշ տեղում (օրինակ՝ նախագահի ափխատակազմում): Արտաքին քաղաքականության լուրջ խնդիրներ Անվտանգության խորհուրդը վաղուց չի քննարկել: Արցախյան խնդրում վճիռներ կայացնում են մի քանի հոգով (նախագահը, նրա գլխավոր խորհրդականը, արտգործնախարարը եւ ԼՂՀ նախագահը): Ափխատակազմը գրեթե չի առնչվում Ղարաբաղյան խնդրին: Նախարար Ա. Արզումանյանն ափխատում է նեղ խմբով շրջապատված, աղարտից մեկուսացած:

Հայաստանի իմիջը շատ տուժեց նախագահական ընտրությունների հետեւանքով: Դրանից հետո փոխվեց վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ, փոխվեց ԱԳՆ-ի գործելակերպը, դեսպանությունների վիճակը: Հայաստանը փորձում են մեկուսացնել: Մեր կողմից շատ վատ է տարվում ափխատանքը սփյուռքահայության հետ: Շատ է խանգարում Հայաստանի իշխանությունների կողմից Դաշնակցության նկատմամբ տարվող քաղաքականությունը: Դրսում լոբբիստական ափխատանք եւս չի տարվում: Եթե առաջ մենք Ադրբեջանին գերազանցում էինք բազմաթիվ հարցերում եւ մեր նկատմամբ ափխարհի վերաբերմունքն այլ էր, ապա այսօր, լավագույն դեպքում, մենք նրանց կողքին ենք եւ այլն, եւ այլն:

Անկախ այս բոլորից, արտաքին գործերի նախարարը կարծում է, որ եկել է ակտիվ քաղաքականություն վարելու ժամանակը: Բայց դա չի նշանակում ակտիվորեն բողոքել ու նվնվալ, այլ իրոք ակտիվ ափխատանք տանել:

ԱՐՄԵՆ ՕՀԱՆՅԱՆ
«Երեւան» տեղեկատվական կենտրոն

ԱԶԳ

Միջազգային

Զաղտնի լուսանկարիչ-զրուկները

«Պառարացցի» իտալերեն բառ է, որը նշանակում է «զգաստ միջաց»: Մերօրյա երկոտանի «պառարացցիները», որոնց մասին շատ են գրում վերջերս եւ որոնք երբեմն հանգիստ չթողեցին Ուելսի իշխանուհուն, ավելին էին, քան սովորական մակաբույծները: Նրանցից մեկը Մարտին Ստենինգն էր, որի արարքները սահմանափակող դատական որոշում էր ձեռք բերել Դիանան: Մարտինն իր մոտոցիկլետով Դիանային հետեւում էր ամենուրեք: Երկու անգամ, ըստ իշխանուհու տվյալների, նա բախվել է իր մեքենային, որի հետեւանքով, իշխանուհու դիմումին ի պատասխան, դատարանը որոշում է կայացրել 300 մետր հեռու մնալ իշխանուհուց կամ նրա մեքենայից:

Պատասխանելով այն հարցին, թե որն է պառարացցիների վարվելակերպի թույլատրելի սահմանը, լոսանջելեսյան հայտնի լուսանկարիչ Սկոտ Դաուինն պատասխանել է «Արտայական ընտանիքի անդամների համար ոչ մի սահման չկա»: Զարմանալի չէ, ուշից ընկնող «ագրեսորներ» կարելի է որակել: Նրանք բոլոր ասպերին են հետեւում եւ չդիսկացնում իրենց ապարատը: Մայլզ Զեկսոնը, Անոլդ Շվարցենեգերը, Թոմ Քրուզը, Մայք Թայսոնը եւ հարյուրավոր ուրիշներ լուն ու դադար չունեն նրանցից: Բայց «Դին» նրանց մեջ ամենաեկամտաբերն էր: Նա ինքն էլ չէր խուսափում մամուլին դիմելուց, երբ դրա կարիքը զգում էր, օրինակ, իր ապահարզանի դեպքում: Նա չէր բարկանում կամ բողոքում, երբ մամուլն անդրադառնում էր իր մարդասիրական աշխատանքներին:

Այդուհանդերձ, մամուլն ավելի շատ հոգսեր էր պատճառում, քան ազատում նրան հոգսերից: Վերջին ամիսների լուսանկարները (Դոդի Ֆայեդի հետ), գնահատվում էին մինչեւ վեց միլիոն դոլար: Ինչպիսի անհեթեթություն:

Զրուկները, որոնք կերան Դիանայի կյանքը

Հասարակությունը ինֆորմացիայի կարիք ունի: Նա միշտ փոփոխություն է ուզում տեսնել ու լսել: Ինչքան էլ լավ ու գեղեցիկ լինի կյանքը, հասարակությունը միշտ ծարավի է սենսացիոն նորությունների: Նա հոգնում, ձանձրանում է, եթե չկան այդ նորությունները: Հասարակությունը հետաքրքրասեր է եւ երբեմն այդ հետաքրքրասիրությունը չմտածված չարախնդությամբ է դրսեւորում, որից օգտվում են փառամոլ «զրուկները»: Իր կարճ պատմվածքներից մեկում («Ժիգոլոն եւ Ժիգոլեթը») մարդկային բնավորություններ կերտող անզուգական վարպետ Սոմերսեթ Մոեմը հետեւյալ միտքն է արտահայտում իր հերոսուհու Ստելլայի բերանով. «Ինչո՞ւ են մարդիկ գալիս նորից ու նորից տեսնելու իմ արտը: Որպեսզի մի օր ականատես լինեն, թե ինչպես եմ ես ինձ սպանում (20 մետր բարձրությունից մոտ 2 մետր խորություն ունեցող կրակե ավազանի մեջ նետվելով, (Ռ. Ծ.), իսկ մեկ բաբաք անց նրանք կմոռանան եւ ինձ, եւ իմ անունը»: Այո, հասարակությունը նաեւ ապերախտ է: Հուսանք, որ Դիանայի դեպքում այդպես չի լինի: Եվ ինչպես նախագահ Ջոն Քենեդիի սպանությունից հետո նրա հիշատակը հավերժացավ «Քաղաքացիական իրավունքի ակտի» վավերացումով, այնպես էլ լեդի Դիանայի հիշատակը կհավերժացվի ցամաքային ականների վերացման համաձայնագրի ստորագրումով եւ այսպես կոչված «պառարացցիների» գործունեության սահմանափակումով:

«Ես միշտ հավատացած եմ եղել, որ մամուլը նրան, ի վերջո, կսպանի, նշել է Դիանայի եղբայրը՝ Չարլզը: Բայց երբեք մտքովս չէր անցնում, որ նրանք այդքան անմիջական կապ կունենան մահվան հետ»:

Ուրիշ ինչ պատճառներ էլ նշվեն, պարզ է մի բան, որ նրա մեքենան

լուսանկարիչներից խուսափելու համար է ավելացրել արագությունը: Ֆրանսիական ոստիկանությունը պատահարից անմիջապես հետո ձերբակալեց 7 լուսանկարիչների (6 ֆրանսիացի եւ մեկ մակեդոնացի): Գուցե Դիանայի մահը ծառայի նրան, որ սահմանափակվի հանուն փողի անվանի մարդկանց անընդհատ հետեւող լուսանկարիչ-զրուկների գործունեությունը:

Բայց երեւի, իրենց անվան սկզբնաղբյուրը հանդիսացող միջաստների նման, պառարացցիներին այնքան էլ հետաքրքիր չէ վերացնել, քանի որ նրանց «արվեստը» սնվում է սենսացիայի նկատմամբ հասարակության ունեցած անհագ ցանկությամբ, որը միգուցե կարելի կլինի մի փոքր մեղմել, բայց ոչ ամբողջովին վերացնել: Այդ «արվեստը» նոր չէ: Եղել է նաեւ առաջներում: Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ եւ անմիջապես հետո հոլիվուդյան հանդեսներն օգտագործել են նման զաղտնի լուսանկարիչների «արտադրանքը»: «Հռոմեական արձակուրդներ» հայտնի ֆիլմում պատկերվում է նման արարք: Իսկ Ֆելինիի «Քաղցր կյանք» ֆիլմը առաջինն օգտագործեց «պառարացցի» տերմինը:

Հետագայում, սակայն, ազատ շուկայական պայմաններում նրանց թիվը ոչ միայն ավելացավ, այլեւ գործունեությունը դարձավ վտանգավոր: Նրանց պարզապես շահույթի ետեւում ընկնող «ագրեսորներ» կարելի է որակել: Նրանք բոլոր ասպերին են հետեւում եւ չդիսկացնում իրենց ապարատը: Մայլզ Զեկսոնը, Անոլդ Շվարցենեգերը, Թոմ Քրուզը, Մայք Թայսոնը եւ հարյուրավոր ուրիշներ լուն ու դադար չունեն նրանցից: Բայց «Դին» նրանց մեջ ամենաեկամտաբերն էր: Նա ինքն էլ չէր խուսափում մամուլին դիմելուց, երբ դրա կարիքը զգում էր, օրինակ, իր ապահարզանի դեպքում: Նա չէր բարկանում կամ բողոքում, երբ մամուլն անդրադառնում էր իր մարդասիրական աշխատանքներին:

Այդուհանդերձ, մամուլն ավելի շատ հոգսեր էր պատճառում, քան ազատում նրան հոգսերից: Վերջին ամիսների լուսանկարները (Դոդի Ֆայեդի հետ), գնահատվում էին մինչեւ վեց միլիոն դոլար: Ինչպիսի անհեթեթություն:

Դժվար է պատկերացնել, նույնիսկ անհավանական է, որ նման լուսանկարների պահանջարկը չխանգարի: Ինչպես մի եվրոպացի խմբագիր նշել է. «Սկզբնական շրջանում բոլորը խիստ զգույշ կլինեն, սակայն հետագայում դարձյալ ամեն ինչ բնականոն ընթացքով կշարունակվի»: ԱՄՆ-ում ապրող մի պառարացցի Ռասել Թուրիքը համամիտ է այս կարծիքին: «Մարդիկ ցանկանում են տեսնել հոչակավոր անձնավորություններին, իմանալ նրանց կյանքի մանրամասնությունները: Նրանց այդ հետաքրքրասիրությունն է ծնել է այս «արվեստը»: Եթե չհետաքրքրվեին այդ լուսանկարներով, մենք չէինք նկարի»: Ոչ էլ լավ վաճառող ապրանքների «դինամիկան» կփոխվի: Ինչպես միշտ, ինչքան կադրը «մտերիկ» լինի, այնքան ավելի կարժենա: Կարեւորը, որ կադրը շարժում կամ գործողություն պատկերի: Դա սենսացիա առաջացնելու առաջին պայմանն է: Այդտեղից էլ առաջանում է հակադրությունը լուսանկարիչների եւ նրանց «զոհերի» միջեւ: Խուսափելով իրենց հետապնդողներից Ալեք Բոլդուինը, օրինակ, օգոստափրփուր է ցայտեցրել լուսանկարչական ապարատի վրա, իսկ Զոն Քենեդի կրտսերը մի դույլ ջուր լցրել:

Այդ բոլորը չի նվազեցրել նրանց համառությունը: Պարզվել է, որ նույնիսկ ավտովթարից հետո նրանք շարունակել են լուսանկարել Դիանային առանց նրան օգնության ձեռք մեկնելու: «Այդ են վկայում որոշ լուսանկարներ, որ մեզ են առաջարկել»,- խոստովանում է բրիտանացի մի խմբագիր: Նույնն է վկայում նաեւ պառարացցի Մասիմո Սեստինին, համածայն որի, իր ընկերներից մեկը նկարել է ամեն ինչ, բայց առայժմ չի վաճառում:

Բայց ի՞նչ հիմքեր կան հավատալու, որ ինչ-որ մեկը, ինչ-որ ժամանակ հարմար չի դատի գնել դրանք եւ տպագրել: Եվ այդ ժամանակ...

Կինը, ում սիրում էր ամբողջ աշխարհը

Երբ 1981-ի հուլիսի 29-ին իշխան Չարլզն ու լեդի Դիանա Ֆրենսիս Սպենսերն ամուսնացան, աշխարհի ամենաարբեր երկրներում ապրող միլիոնավոր մարդիկ այդ միությունը անվանեցին «դարի ամուսնությունը»: Դա առաջին տեսարանն էր 16 տարի ծգվող մի էժանագին օպերայի, որտեղ Դայանային վիճակված էր խաղալ տարբեր (անմեղ հարսնացու, սիրելի մայր, նորածեւության մասնագետ, բարեգործ կին) դերեր: Ամենահոչակավոր անձնավորությունը լինելով աշխարհում, նա չափազանց միայնակ էր զգում իրեն: Եվ ինչքան նրա ժողովրդականությունը բարձրանում էր, նա այնքան հեռանում էր ամուսնուց, որի անտարբերությունը աճում էր մինչեւ անցավ բոլոր թույլատրելի սահմանները: Դիանան սկսեց մխիթարություն փնտրել հասարակության կողմից դուրս շրտված այլ միայնակների՝ ԴԱՎ-ով հիվանդների, թմրամոլների, որբացած երեխաների, ականներից տուժածների եւ այլոց շրջանում:

Հատկանշական են ամուսնության սկզբնական ամիսներին զույգի՝ Չարլզի եւ Դիանայի պատասխանները մի լրագրողի «սիրո՞ւմ եք իրար» հարցին: Դիանան անմիջականորեն պատասխանել է իհարկե, մինչդեռ Չարլզը ի՞նչ է սերը երբեւէ նշանակել:

Դիանան վեց տարեկան է եղել (1967-ին), երբ մայրը թողնելով ամուսնուն՝ Սպենսերների ընտանիքի 8-րդ կոմսին, միացել է հարուստ գործարար Պիտեր Շանդ Քիդին: Այդ ժամանակ Դիանայի երկու մեծ քույրերը Սառան եւ Ջեյնը սովորել են գիշերօթիկ դպրոցում, իսկ կրտսեր եղբայր Չարլզն ու ինքը uտիպված են եղել մի տնից մյուսը կարգալ հաջորդող մի քանի տարիների ընթացքում:

Տասներկու տարեկանում Դիանան հաճախել է Ուեստ Հիթ սուլ շատերին անմատչելի դպրոցը Քենտում, որտեղ չորս տարի սովորելուց հետո մեկնել է Շվեյցարիա, մի որոշ ժամանակ այնտեղ սովորել եւ դրանով վերջ դրել իր պաշտոնական ուսումնառությանը:

Սպենսերները ճանաչված էին որպես ամենաարիստոկրատ ընտանիքը Բրիտանիայում: Դիանան նախկինում սիրեկաններ չէր ունեցել: Չարլզի մասին նույնը չէր կարելի ասել: Նույնիսկ ամուսնությունից առաջ, նա իր ելկարամյա սիրուհի Քամիլլա Բոուլզին ոսկյա ապարանջան էր նվիրել, իսկ ամուսնությունից հետո շարունակել տեսակցել նրա հետ:

1982-ին ծնվեց Ուիլյամը՝ առաջին, իսկ 1984-ին Հարրին՝ երկրորդ զավակը: Ամուսնության առաջին յոթ տարիների ընթացքում նրանք միասին պաշտոնական այցով գտնվել են 19 երկրներում, որոնցից յուրաքանչյուրում Դիանայի գալստյանը ավելի շատ են սպասել, քան Չարլզի:

Հասարակության առջեւ ստեղծված «գերազանց զույգի» պատկերը երկար չէր կարող գոյատեւել: Հանրության եւ մամուլի Դիանային հասցեագրված առավել ուշադրությունից ծնվեց նախանձը, անտարբերությունը:

Դիանան համարձակորեն ձեռք էր մեկնում ԴԱՎ-ով հիվանդներին, որոնցից բոլորն էին խուսափում: Որդիներին առաջնորդում էր անօթեւան մարդկանց հետ հանդիպելու՝ բացատրելով նրանց կյանքը, նաեւ տհաճ իրողությունները: Չարլզի հետաքրքրությունները ձիապորտի եւ նորագույն փիլիսոփայության շուրջ էին պտտվում: Դիանան սիրում էր լսել պոպ երաժշտություն, կարդալ սիրավեպեր, եւ ժամանակն անց-կացնել որդիների հետ: Չարլզը պաշտում էր որսորդությունը, Դիանան ատում:

Գնալով հակասությունները նրանց միջեւ շատ ավելի խորացան, քան նրանց 12 տարվա տարիքային տարբերությունն էր: 80-ական թվերին հասարակությանը հայտնի դարձան ծախողված ամուսնության որոշ մանրամասներ: 1991-ին հակասությունները ստացան առավել ողբերգական բնույթ: Պոլոցում Ուիլյամը գանգի ուժեղ վնասվածք էր ստացել գոլֆի մականի պատահական հարվածից: Դիանան հիվանդանոցում երկու գիշեր չէր հեռանում որդու մոտից, իսկ Չարլզը մեկ անգամ կարճ այցելությունից հետո օդերեւ էր զնացել:

«Դիանա: Նրա ճշմարիտ պատմությունը» գրքի հրատարակումը հաջորդ տարի ցրեց ամուսնության անխուսափելի վախճանի բոլոր կասկածները: 1994-ի հունիսին հեռարձակված հարցազրույցում Չարլզը խոստովանեց, որ անհավատարիմ է եղել, իսկ իր կենսագրական գրքում որ երբեք չի սիրել Դիանային եւ ամուսնացել է նրա հետ լոկ հոր դրդումներով: Նա Դիանային բնութագրել էր որպես անհավասարակշիռ անձնավորության: Իսկ Դիանան այդ մեղադրանքին հակադրել էր այն միտքը, որ իր որդին՝ Ուիլյամը, ավելի կապագիր թագավորական գահին, քան Չարլզը: Անձնական նոտայի դրսակի եւ Լոնդոնի Հարրոդս հանրահռչակ հանրախանութի սեփականատեր է: Նրան հաջողվել է որդուն ուղարկել Սանդհըրստի արքայական զինվորական կոլեջ: Բայց լայն կապերի առկայության պայմաններում էլ Անգլիան մերժել է նրան քաղաքացիություն տալ:

Իրենց ընտանիքների հարստությունից, արքայական մթնոլորտից եւ հանրահայտ լինելու տաղտուկից ձանձրացած Դին ու Դոդին միմյանց մեջ էին մխիթարություն գտնում: Ընդամենը մեկ ամիս առաջ պառարացցիներին հաջողվել էր նրանց միասին նկարել Դոդիի զբոսանավի վրա: Միջերկրական ծովում: Նկարը 4,5 միլիոն էր բերել հեղինակին: Նրանք ծանոթացել էին մոտ տասը տարի առաջ:

Արտավոր շրջանակ

Լուսանկարիչները պնդում են, որ թերթերի տնօրենները են պահանջում: Վերջիններս պնդում են, որ ընթերցողներն են ակնկալում: Իսկ ընթերցողներն էլ իրենց հերթին առարկում են, որ տաղտկալի դատարկությունը լցնելու միակ միջոցը հանրահայտ մարդկանց անձնական կյանքի մանրամասնություններն են: Նրանք այ-



սոր վրդովված են դժբախտ պատահարից, դատապարտում են պառարացցիներին մոռանալով, որ նրանց ատելի ու մահաբեր «արվեստի» աղբյուրը հենց իրենք են, իրենց անհագ հետաքրքրասիրությունը: Սակայն հետաքրքրասիրությունը մարդկային է եւ շատ բնական: Շատ դեպքերում նաեւ խրախուսելի: Ուրեմն «պառարացցիներին» մնում է չափավորել իրենց գործունեությունը եւ չչարաշահել իրենց իրավունքները:

«ԵՅՈՒՇՈՒՔ»
Պատրաստեց
ՏԱՏՈՒ ՇՈՒԼԻԿՅԱՆԸ

ԱԶԳ

Մշակույթ

Հույները Երևանի «Աշնանային սերենադում»

Մայրախաղաքի մշակութային կյանքի ուշադրության ծիրում է սկիզբ առած «Աշնանային սերենադ» երաժշտական փառատոնը: «Ազգ»-ի էջերում այն լուսաբանում է երաժշտագետ, Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր Սվետլանա Սարգսյանը:

երբ 2 տարի առաջ «Կաղանս» երաժշտական կենտրոնի ղեկավար Նիկա Բաբայանը կամերային երաժշտության միջազգային փառատոն կազմակերպեց «Աշնանային սերենադ» բանաստեղծական խորագրով, կարծում էինք, որ դա գուցե միակը լինի: Սակայն անցած տարիներին, լինելով «Սերենադ» կամերային նվագախմբի (գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր՝ էդվարդ Թոփչյան) փայլուն մենեջերը, Ն. Բաբայանը զգալիորեն կատարելագործեց փառատոնային աշխատանքի իր ոճը: Արդյունքներն ակնհայտ են. Կամերային երաժշտության տանը բացված երկրորդ «Աշնանային սերենադը» ներառավ 20 համերգ հայ եւ արտասահմանցի կատարողների մասնակցությամբ:

Առաջին համերգների ծրագրերն անցան «Սերենադ» նվագախմբի եւ Հունաստանի տաղանդավոր երաժիշտների համագործակցության նշանաբանով: Դա նախ եւ առաջ ջութակահար Յորգոս Դեմերցիսն է, որի կատարողական բարձր կուլտուրան ի հայտ եկավ առաջին իսկ հնչյուններից, երիտասարդ վիրտուոզ կոնտրաբասահար Վասիլիս Պապավասիլուն եւ համակողմանիորեն օժտված դիրիժոր ու կոմպոզիտոր Նիկոս Քրիստոդուլուն: Կարեւոր տեղ զբաղեցնելով Հունաստանի մայրաքաղաքի երաժշտական կյանքում, նրանք հասցրել են նվաճել աշխարհի տարբեր երկրներում:

Հատկապես նշանակալի է Յորգոս Դեմերցիսի միջազգային վարկանիշը: Նրա կյանքը հագեցած է Եվրոպայում, Ամերիկայում եւ Ավստրալիայում տվող համերգներով, ինչպես նաեւ մանկավարժական ու հասարակական գործունեությամբ: Նա հիմնել է «Նոր հելլենական քառյակը», որը դարձել է Հունաստանի

Նիկոս Քրիստոդուլու

առաջատար լարային քառյակը: Այդուհանդերձ քառյակի երաժիշտ Դեմերցիսի գործունեությունը բնավ չի նսեմացրել մենակատար Դեմերցիսի արտիստական արժանիքները:

Լինելով բարձրակարգ կատարող, Դեմերցիսը համերգի ժամանակ խուսափում է իր գերազանցության ընդգծումից: Ջութակահարի մենանվագի արտահայտչականությունը երկրորդ հենք չի մղում անսամբլային համերաշխության սկզբունքները: Նվագակցի հանդեպ զարմանալի վստահությունը անմիջապես ստեղծում է ներդաշնակության ու համաձայնության մթնոլորտ, որն այնքան անհրաժեշտ է բարոկկոյի դարաշրջանի ստեղծագործություններ ի հայտ բերելու համար: Երեւանցի ունկնդիրների համար Դեմերցիսը ընտրել էր դրանցից երկուսը՝ Յ. Ս. Բախի մի մաժոր կոնցերտը եւ Ա. Վիվալդիի «Տարվա եղանակները»:

Յորգոս Դեմերցիս

Կատարման դարգությունն ու բնականությունը, որոնք ուղեկցվում էին թեթեւասահ հնչյունների գեղեցկությամբ, Բախի կոնցերտին հաղորդում էին իտալական երաժշտության գծեր: Ն. Քրիստոդուլուի ղեկավարությամբ խումբը մենակատարի նվագը երանգավորում էր իր հնչերանգի ընդհանուր խլացվածությամբ: Սակայն Վիվալդիի ստեղծագործությունը կատարելիս նվագախմբի երաժիշտները փայլեցին անհատական եւ անսամբլային տեխնիկայով (նշեմ թավջութակահարների կոնցերտմայստեր Հրանտ Երանոսյանին, որը տրամադրություն էր ստեղծում «Տարվա եղանակների» զուգանվագային անցումներում): Իսկ մենակատարը ազատորեն ներածելով իմպրովիզացիոն անկանխադրություն եւ ֆոլկլորային տարրեր, այդուհանդերձ, պահպանում էր ակադեմիական արվեստի ոճը:

Ավանդական նվագացանկում ձայնային նոր հնարավորություններ հայտնաբերելու ձգտումը բնորոշ էր նաեւ Վ. Պապավասիլուի նվագին: Նրա կոնտրաբասի թեթեւ, թռիչքային հնչողությունը զերծ է մեծ գործիքի սովորական «ծանրաշարժությունից»: Երաժիշտը կորզում էր անսպասելի տեմբրային երանգներ, նվագը նմանեցնելով բարձր լարայիններ հնչողությանը: Ջովաննի Բոտտեգինիի (19-րդ դարի կոմպոզիտոր եւ կոնտրաբասահար) վենետիկյան կառնավալի թեմայով գրած Ինտրոդուկցիան եւ Վարիացիաները հատկապես հարմար ստեղծագործություն էին:

Մենակատարների նման դիրիժոր Նիկոս Քրիստոդուլուն եւս ազգային մշակույթի մեծ երկրպագու է: Երեւանում նա հնչեցրեց Հունաստանից»: Երաժիշտը կորզում էր անսպասելի տեմբրային երանգներ, նվագը նմանեցնելով բարձր լարայիններ հնչողությանը: Ջովաննի Բոտտեգինիի (19-րդ դարի կոմպոզիտոր եւ կոնտրաբասահար) վենետիկյան կառնավալի թեմայով գրած Ինտրոդուկցիան եւ Վարիացիաները հատկապես հարմար ստեղծագործություն էին:

Մենակատարների նման դիրիժոր Նիկոս Քրիստոդուլուն եւս ազգային մշակույթի մեծ երկրպագու է: Երեւանում նա հնչեցրեց Հունաստանի Սկալկոտտասի երաժշտությունը (նրա «Հունական պարերը» սիմֆոնիկ տարբերակով անցյալ համերգաշրջանում կատարեց նաեւ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը) եւ ներկայացրեց լարային նվագախմբի համար իր գրած «Չայներ II» գործը, Շոպենի պրելիուդիաների մի քանի նվագախմբային փոխադրումներ (այդ աշխատանքն ինձ այնքան էլ արդարացված չթվաց):

Լինելով զգայուն եւ ճնարա-ռոմանտիկական բնավորության տեր, Քրիստոդուլուն նվագակցելիս մշտապես աղահովում էր մենակատարի ու նվագախմբի անհրաժեշտ հավասարակշռությունը: Ներկայումս Աթենքի սիմֆոնիկ նվագախմբի ղեկավարը հանդիսացող հույն դիրիժորի լավագույն հատկանիշները բացահայտեց Դ. Շոստակովիչի պարտիտուրան: 10-րդ լարային կվարտետի նվագախմբային փոխադրումը (Ռուդոլֆ Բարշայի կողմից) լսվում էր չթուլացող ուշադրությամբ: Դիրիժորը եւ «Սերենադի» կոլեկտիվը մեկ ամբողջություն կազմեցին սուզվելով Շոստակովիչի փիլիսոփայական աշխարհի խորքերը: Նրանք ասես տեսանելիորեն կերտում էին ճանաչողությունը, դրանում ներգրավելով բոլոր ներկաներին:

Ընդհանրապես «Սերենադ» նվագախումբը դժվար է ղեկավարվում ուրիշ դիրիժորների կողմից: Եվ առաջին համերգի ժամանակ դա նկատելի էր, երբ Քրիստոդուլուից հետո վահանակի մոտ հայտնվեց էդվարդ Թոփչյանը եւ վստահորեն, երիտասարդ երաժիշտներին բնորոշ խանդավառությամբ ղեկավարեց լարային նվագախմբի համար գրված Ա. Դվորժակի «Սերենադը»: Սակայն դիրիժոր ու կոմպոզիտոր Նիկոս Քրիստոդուլուն իր բանաստեղծական խառնվածքի շնորհիվ վերջին համերգի ժամանակ լրացրեց այն, ինչը առաջինի ընթացքում պակասում էր թե իրեն եւ թե Թոփչյանին, եւ հնազանդ նվագախումբն իրեն դրսեւորեց պոլիֆոնիկ միահյուսումների ու ծավալային հնչողության ճկունության մեջ:

Հոկտեմբերի 16-30-ը Հայաստանում անց է կացվելու «Անտիկ աշխարհը եւ մենք» թատերական փառատոն: Փառատոնին իր մասնակցությունը կբերեն Աթենքի «Ատիս» եւ Մոսկվայի «Ա» թատրոնները: Հոկտեմբերի 8-ին ժամը 15:00-ին մշակույթի նախարարությունում տեղի կունենա հիշյալ փառատոնին նվիրված մամլո ասուլիս:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես, Արմինե Սաղաթելյանս, պահանջում եմ, որպեսզի լրագրող Վանիկ Սանթրյանը «Ազգ» օրաթերթի ս/թ սեպտեմբերի 16-ի՝ «Լորիս Ճգնավորյանին էլ «կերանք», հաջորդն ո՞վ է» հոդվածում ինձ պորտապարուհու պիտակը կպցնելու վիրավորանքի եւ զրպարտանքի համար նույն օրաթերթի էջում ներողություն խնդրի ինձնից: Հակառակ դեպքում ստիպված կլինեմ դիմելու դատական այլանքներին անձիս պատվի շահերը պաշտպանելու համար:

ԱՐՄԻՆԵ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Հայաստանի Ազգային ռադիո, խմբագիր

ՃՇՏՈՒՄ

Մոսկվացի նկարիչ Վիկտոր Ավակիմյանի գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսը բացվել է հոկտեմբերի 2-ին Երեւանում, Մկրտչյան պատկերասրահում:

ՀՈԲԵԼՅԱՆ

Նրա ներկապնակի վրա արեւի ճառագայթն է

Նկարիչ Ալեքսանդր Գրիգորյանի ծննդյան 70-ամյակի առթիվ իր խոսքն է ասում ծաղրանկարիչ Գեորգի Յարալյանը:



Ալեքսանդր Գրիգորյանը պատկանում է հայկական կերպարվեստի վարպետների ավագ սերնդին: Իր փայլուն ուղին նկարիչն սկսել է ցուցահանդեսներից: Ներկայումս դժվար է պարզել, թե նրա գործերը որտեղ չեն ցուցադրվել: Անձնվեր աշխատանքը, Մ. Սարյանի բարերար ազդեցությունը եւ հարազատ հողի բույրը նկարչին հնարավորություն տվեցին բարձրանալ փառքի գագաթներից մեկը:

Պահպանելով իրական դեմքը նկարիչը Մ. Սարյանից ժառանգել է ինչ-որ անորսալի բան, որը արեւի նուրբ շողի պես զգացվում է վարպետի վառ կտավներում:

Ալեքսանդր Գրիգորյանը լավ հայտնի է որպես դիմանկարիչ: Դիտողի վրա ուժեղ տպավորություն են գործում նրա կանացի դիմանկարները, որոնցից ամեն մեկն ունի իր տրամադրությունը, ու յուրաքանչյուր կին գեղեցիկ է յուրովի:

Նկարչի տղամարդկանց դիմանկարների շարքը նույնպես շատ տպավորիչ է: Անհնար է առանձնակի չհիշատակել Վահրամ Փափազյանի դիմանկարը: Այստեղ արվեստագետը հասել է կատարելության սահմաններին: Նա գտել է մեծ դերասանի անհատականությունը բնութագրող խոր էությունը:

Դիմանկարներից զատ նկարչի մյուս տարերքը բնանկարներն են: Դրանցում լիուլի շողում է արեւը, բնության ընդգծված տրամադրությունները: Դրանք ոչ թե բնության պատճենումներ են, այլ յուրօրինակ մեկնաբանություններ: Այդ մտածողությամբ է նա մոտենում նաեւ գրքային գրաֆիկային, որտեղ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում շեխովյան ստեղծագործությունները:

Հանդիսատեսի համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ալեքսանդր Գրիգորյանի մոնումենտալ-պատմական կտավները: Լայն վրձնահարվածները, գույների բանաձրացումը դինամիկ են դարձնում այդ նկարները:

Գեղանկարիչը շատ հեռու է միակերպության աշխարհից: Թվում է, թե միակերպությունը անխուսափելի է դառնում հսկայական քանակությամբ ստեղծագործությունների կերտման դեպքում: Բայց Ալեքսանդր Գրիգորյանը մնում է անսպառ: Նրա աշխատանքներից յուրաքանչյուրի մեջ նորություն կա: Ստեղծագործական նոր հաջողություններ մաղթենք Ալեքսանդր Գրիգորյանին:

ՖՐԱՆՍԻԱ

Շանել N5-ը կրում է Մերլինի ոգին

Չի եղել ավելի լավ զույգ, քան Մերլին Մոնրոյի հավասարումը, որ գիշերաշորիկի փոխարեն նախընտրում է Շանել N5-ի մի քանի կաթիլը: Այս խոսքերի ազդեցությունն այնքան զորեղ եղավ, որ 1921-ին ստեղծված օծանելիքը շարունակում է ցայսօր մնալ այդ ֆիրմայի ամենանշանավոր արտադրանքը: Օծանելիքի անունն ընտրել է ինքը՝ Կոկո Շանելը, նկատի ունենալով, որ ընտրված սրվակը թվով հինգերորդ մոդելն էր: Թանկարժեք հեղուկը նախկինի պես իսկայական պահանջարկ ունենալով՝ զբաղեցնում է անուշահոտությունների միջազգային շուկայի 5 տոկոսը: Ավելին: Այս օծանելիքի վաճառքի ցուցանիշներն աճում են ավելի քան 18 տոկոսով, ապահովելով կազմակերպության յուրօրինակ շահույթը, իսկ ֆիրման, ավանդույթի համաձայն, Շանել N5-ի գովազդում ներգրավում է բացառապես ֆրանսիացի դերասանուհիներին: Այսօր այդ դերը վերապահված է Քարոլ Բուկերին, որի դեմքը գովազդային հոլովակում փոխարկվում է Մերլինի դեմքին: 70-ականներին գովազդին մասնակից դարձավ Կատրին Դենյովը, որը նոպաստեց Միացյալ Նահանգներում Շանել N5-ի իսկական թռիչքին:

Շանելի փառքը համաշխարհային բնույթ ունի: Սակայն, ինչպես հայտնում է «Ֆրանսիա» ամսագիրը, ֆիրման իր կառուցվածքով ամբողջապես ընտանեկան ձեռնարկություն է, որի դրամագլուխը պատկանում է Վերթեյմեր գերդաստանին: Ֆիրման բորսայում ներկայացված չէ, սակայն միայն պարֆյումերիայի ոլորտում նրա տարեկան շրջանառությունը գերազանցում է 8 միլիարդ ֆրանկը: Շանել N5-ի, N19-ի, Coco-ի, Cristalle-ի, Egoist-ի, ինչպես նաեւ Ungaro ֆիրմայի արտադրանքի շնորհիվ ֆիրման զբաղեցնում է աշխարհում՝ 6-րդ, Ֆրանսիայում՝ 4-րդ տեղը L'Oré'al, LVMH, եւ Elf-Aquitaine ֆիրմաներից հետո: Երկար տարիներ ֆիրմայի անունը անիկայտելիորեն զուգորդվում էր նրա հմայիչ հիմնադրի կերպարի հետ: Այսօր Շանելը վերածվել է միջազգային միավորման: Իսկ նրա ամերիկյան մասնաճյուղի նախագահ Ալեն Վերթեյմերը թերեւս բազմազանության համար ձեռք է բերել Բորդոյի հռչակավոր գինու արտադրության իրավունքը:

Ա. Գ.

Հնագույն լուսանկարչություն

Այս տարվանից Ֆրանսիայի մասնագետները սկսել են հնագույն լուսանկարների վերականգնումը: Ինչպես հաղորդում է «Ֆրանսիա» ամսագիրը, սա հնարավոր դարձավ Փարիզին ընծայված բնորոշ նվերի՝ Լուսանկարչության եվրոպական տան շնորհիվ: Թանգարանների խաղաթը համաչափող նոր հասցեությունը տեղադրված է 18-րդ դարի հնագույն առանձնատանը, որ վերականգնվել է ճարտարապետ Իվ Լիոնի ջանքերով: 3500 քմ ընդհանուր մակերեսով ցուցասրահները տեղակայված են 7 տարբեր հարթություններում, որոնցից երկուսը՝ ստորգետնյա: Այստեղ, առանձնատան դահլիճներում, հերթագայությամբ կցուցադրվի ոչ միայն թանգարանի հիմնական հավաքածուն, որ բաղկացած է 12 հազար ստեղծագործություններից, այլեւ, ժամանակակից ցուցասրահներում ժամանակ առ ժամանակ կներկայացվեն այլ հավաքածուներ: Էնո դը Քանթորի՝ առանձնատան առաջին տիրոջ անունը կրող դահլիճում կբացվեն պատմական եւ գիտական ցուցահանդեսներ: Հենց այստեղ հնարավոր կլինի տեսնել հնագույն լուսանկարները: Ստորերկրյա հարկում, Արվեստանոցների կամարների տակ այցելուները կծանոթանան լուսանկարչության վերաբերյալ գիտության վերջին հեռագոտություններին, իսկ առաջին հարկում թույլատրված է կախել՝ երիտասարդ նկարիչների գործերը եւ հրատապ նշանակություն ունեցող լուսանկարային ռեպորտաժները: Թանգարանում կա նաեւ 12 հազար հատոր գրականություն ունեցող գրադարան՝ ստեղծված լուսանկարչության պատմագետ Ռոմեո Մարտինեզի հավաքածուի հիման վրա, շուրջ 500 ֆիլմերի տեսադարան: Հավաքված են նաեւ լուսանկարչության 4 հազար վարպետների կենսագրությունները եւ աուդիոարխիվը:

Ռեյմոն Դեպարդոն, Բեթինա Ռեյմս (Ֆրանսիա), Հելմուտ Նյուտոն, Ռիչարդ Ավեդոն, Նեն Գոլդին, Ռոբերտ Ֆրանկ, Իրվին Պեն, Հենրի Կալետեն, Ռոբերտ Մեպլրտրոպ, Ուիլյամ Ուիգման, Էնդի Ուորհոլ (ԱՄՆ), Սեբաստիանո Սալգադո (Բրազիլիա), Քեիշի Տահարա (Ճապոնիա), ահա անուններ, որոնց գործերը գտնվում են թանգարանի հավաքածուում:

Ա. Գ.

ԱԶԳ

Մարզական

ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ

Հայաստան-սիյուռք. Նոր կամուրջներ

Հայաստանի մարզիկները հանդես կգան Լիբանանում

Հայաստանի սեղանի թենիսի պատմության մեջ առաջին անգամ ազգային հավաքականը կիսուրընկալվի սփյուռքի ծաղկուն ոստան Բեյրութում: Լիբանանի մայրաքաղաքում հոկտեմբերի 23-26-ը կանցկացվի «Լիբանանի պրոֆեսիոնալ Մեծ մրցանակի» խաղարկությունը: Սեղանի թենիսի միջազգային ֆեդերացիայի հովանավորությամբ անցկացվելիք խոշոր մրցումներին կմասնակցեն շատ երկրների ճանաչված մարզիկ-մարզուհիներ: Եվ ահա Լիբանանի սեղանի թենիսի ֆեդերացիայի փոխնախագահ, «Մեծ մրցանակի» կազմակերպիչ Միշել դը Շատարեյանը (հայ-կաթողիկե համայնք) հատուկ նամակով Հայաստանի սեղանի թենիսի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Ասատրյանին տեղեկացրեց, որ Հայաստանի աղջիկների հավաքականը հյուր է լինելու Լիբանանի ֆեդերացիային, որի կազմում են նաև երկու մեր հայրենակիցներ՝ Լիբանանի բազմակի չեմպիոններ Մարսել Բարսամյանը («Կֆարշիմա-Ռիադա Ադաբ») եւ Ռաֆֆի Մնջողլյանը (ՀԵԸՄ): Լիբանանահայ սեղանի թենիսիստ-թենիսիստուհիներն արդեն 45 տարի իրենք են շահում երկրի թիմային եւ անհատական հաղթողների գավաթները: Լիբանանը ներկայացնելով աշխարհի առաջնություններում, միջազգային ամենատարբեր մրցումներում: Այժմ Հայաստանի թենիսիստուհիներ Մարիներ Բիջոյանին (1997 թ. հանրապետության չեմպիոնուհի), Մարիանա Սահակյանին (1996 թ. չեմպիոնուհի), Նունե Խաչատրյանին (1994 թ. աղջիկների չեմպիոնուհի) ծափահարելու կգան Բեյրութի ՀԵԸ-Անդրանիկի, ՀԵԸՄ-ի, ՀՄՄ-ի հանրահայտ վետերանները: Նրանցից կարելի է նշել Նազիկ Հովհաննիսյանին (60-70-ականների Լիբանանի անմրցելի չեմպիոնուհի), Վահագ Հովհաննիսյանին (60-ականների Լիբանանի անմրցելի չեմպիոն), Գրիգոր Կոդալազյանին (60-ականների Լիբանանի զուգախաղերի բազմակի չեմպիոն), Ալեխս Աճեմյանին (1973 թ. արաբական աշխարհի պատանիների չեմպիոն) «Նորածին ասղերից» կուզենայի առանձնացնել 1997-ին Մանչեստրում անցկացված աշխարհի առաջնության մասնակից Ռազմիկ Շեմեմյանին եւ 1996-ի Լիբանանի համալսարանական չեմպիոն Սահակ Պեսինյանին: Հայաստանի սեղանի թենիսիստուհիներին սպասում է ոչ միայն սուր եւ լարված դայքար, այլեւ՝ 20 հազար դոլարի հասնող դրամական պարգեւներ: Այդ մրցաշարը նախապատրաստական փուլ կլինի 1999 թվականին անցկացվելիք համահայկական խաղերից առաջ:

Հուսով ենք, որ Հայաստանի մարզիկների այցելությունը Լիբանան, այդ երկրի խորհրդարանի նախագահ Ն. Բերրիի հայաստանյան ուղեւորությունից հետո, նոր կամուրջներ կհաստատի Լիբանանի եւ արաբական աշխարհի մարզական ջանակների միջեւ:

ՀԱՄՈ ՄՈՍԿՈՓՅԱՆ

Հայաստանի հավաքականի անդամներ Մարիանա Սահակյանը, Մարիներ Բիջոյանը եւ Նունե Խաչատրյանը

Ռոդնինան մարզադդրոց կբացի Մոսկվայում

Ինչպես հայտնի է, աշխարհահռչակ գեղասահորդուհի Իրինա Ռոդնինան 1989 թվականից ապրում եւ աշխատում է ԱՄՆ-ում: 48-ամյա Իրինան գեղասահով զբաղվում է 5 տարեկանից, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ է, 11 անգամ դարձել է Եվրոպայի, 10 անգամ աշխարհի չեմպիոն: Օլիմպիադաների եռակի չեմպիոն է: Ներկայումս նա բնակվում է Լոս Անջելեսի մերձակա լեռնային գյուղերից մեկում, սահադաշտից ոչ հեռու: Իրինայի աշխատանային օրը սկսվում է 6-ն անց կեսին, վերջին մարզումն ավարտվում է գրեթե կեսգիշերին: Այսօր նա ունի բազմաթիվ աշակերտներ, այդ թվում մի ուժեղ մարզական զույգ, որը հավանաբար հանդես կգա առաջիկա օլիմպիական խաղերում: Երկու ամուսնալուծությունից հետո Իրինան ապրում է զավակների՝ 11-ամյա Ալյոնկայի եւ 18-ամյա Սաշայի հետ:

Օրերս Ռոդնինան Մոսկվա էր եկել տեսնելու հիվանդ հորը եւ հանդիպելու Յուրի Լուժկովի հետ: Այդ առիթով «Իզվեստիայի» թղթակցին տված հարցազրույցում Իրինան խոստովանում է, որ ինքը միանգամայն երջանիկ է որպես մարզուհի եւ մարզիչ, քանի որ պատրաստել է աշխարհի չեմպիոններ: Իսկ ընդհանուր առմամբ, նրա կարծիքով, երջանկությունը չի կարող կատարյալ լինել, քանզի ամեն ինչ փոխվում է: Բայց ինքը դեռ սպասելիքներ ունի կյանքից:

Մոսկովյան հեռուստատեսության «Հայացք» ծրագիրը վերջերս տեղեկացրեց, որ Իրինա Ռոդնինան մտադիր է գեղասահքի դպրոց բացել Մոսկվայում: Իրինան ավելացնում է, որ Ռուսաստան վերադառնալը եւ այնտեղ աշխատելն այժմ դարձել են կյանքի իմաստ: Ճիշտ է, եթե կնքած պայմանագիր ունես, ԱՄՆ-ում հանգիստ է եւ վաղվա օրը հայտնի: Ամերիկյան սահադաշտում մարզչական աշխատանքի ընթացքում ինքը մեծ հաճույք է զգում ամեն տարիքի մարդկանց հետ շփվելուց: Իրինան, սակայն, խոստովանում է, որ շատ է կարոտել Մոսկվային, որտեղ ինքն անցյալում դժվար պահերին ժամերով զբոսնում էր ծառուղիներում:

Իրինայի 1989 թ. ԱՄՆ տեղափոխվելը չար լեզուները մեկնաբանեցին որպես դավաճանություն: Նույնիսկ ասում էին, թե ուզում է Լենինի շքանշանը վերադարձնել: Մինչդեռ ամենքը լավ հիշում են, թե նա մի քանի անգամ չեմպիոնի պատվանդանին կանգնած ինչպես էր հուզմունքից արտասվել ԽՍՀՄ-ի օրհներգը լսելիս:

Ինչ վերաբերում է նախկին ամուսին Ալեխանդր Զայցեւին, նա ամեն ամառ հյուրընկալում էր որդուն, իսկ մեկ ամիս առաջ մեկնեց ԱՄՆ, որտեղ Իրինան նրա համար աշխատանք է փնտրում: Բայց մարզական կամ ընտանեկան դաշինքի մասին խոսք լինել չի կարող, ընդգծում է Իրինան: Նա գոհ է զավակներից, որոնք խելացի են եւ ուսումնասեր:

Իրինա Ռոդնինայի մոսկովյան մարզադդրոցը կառուցվում է Բերեսնեւսկայա առափնյակում: Դա մեր ընկալմամբ չի լինելու սովորական դդրոց: Սահադաշտը բաց կլինի ամենի համար: Կենտրոնը կլինի միջազգային: սառույցը կկարողանան վարձել նաեւ արտասահմանցի մարզիկներն ու մարզիչները, Մոսկվայի հյուրերը: Առավոտյան եւ երեկոյան ժամերը կհատկացվեն բարձրակարգ գեղասահորդներին, ցերեկային ժամերը երեխաներին: Հանգստյան օրերին սահադաշտը, հավանաբար, կծառայի լայն հանրությանը: Միջազգային կենտրոններն այդ սկզբունքով են գործում թե ԱՄՆ-ում, եւ թե Եվրոպայում: Նույն շենքում կլինեն նաեւ մարմնամարզության կենտրոն, բար, խանութներ, չմուշկների վարձույթի կետ: Մարզիկների համար կառուցվում է 20 տեղանոց փոքրիկ հյուրանոց: Քաղաքապետ Յուրի Լուժկովի միջամտության շնորհիվ մարզադդրոցի շինարարությունը կֆինանսավորվի Մոսկվայի բյուջեից:

Իրինա Ռոդնինայի ներկա պայմանագրի ժամկետն ավարտվում է տարեվերջին: Նա նշում է, որ թեեւ ԱՄՆ-ում ինքը նյութապես ապահովված է, բայց միայնակ է: «Հայացքի» հաղորդումից հետո ռուսաստանցի բարեկամներն ու ծանոթներն անդադար զանգահարում էին Իրինային, օգնություն առաջարկում: Առաջինը զանգահարեց հանրահայտ ակնաբույժ Սվյատոսլավ Ֆյոդորովը:

Իրինան խոստովանում է, որ ամեն երկրում էլ նոր գործ սկսելը շատ դժվար է, բայց ինքը վերջնականապես կվերադառնա Ռուսաստան, եթե իր ներկայությունն անհրաժեշտ լինի:

Պ. Ք.

ՆԱՎԱՄՈԴԵԼԱՅԻՆ ՍՊՈՐՏ

Մրցանակներ «Հայաստան» հիմնադրամի հովանավորությամբ

Օգոստոս-սեպտեմբերին նավամոդելային սպորտի՝ Բուլղարիայում կայացած աշխարհի առաջնությանը, Ֆրանսիայում կայացած «Եվրոմոդել» փառատոնին եւ գավաթի մրցումներին մասնակցում էր նաեւ Հայաստանի հանրապետության թիմը: Թիմը գլխավորում էր Հայաստանի նավամոդելային մարզածեւի ֆեդերացիայի նախագահ, աշխարհի հնգակի չեմպիոն, տեխ. գիտությունների թեկնածու Հրաչյա Շահազիզյանը: Թիմը, որի կազմում էին երիտասարդների աշխարհի կրկնակի չեմպիոն Արման Շահազիզյանը եւ երիտասարդների եռակի չեմպիոն Գայանե Շահազիզյանը, Ֆրանսիայի «Եվրոմոդել» փառատոնում շահեց գլխավոր մրցանակը եւ գավաթը:

Հայաստանի թիմի մասնակցությունը հովանավորել է «Հայաստան» համահայկական հիմնադրամը:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿԱՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՆԻՍ

Չեմպիոնների կոչման համար

«Հրազդան» մարզահամալիրի թենիսի մասնագիտացված մարզադդրոցի դահլիճներում անցկացվում են հանրապետության տղամարդկանց եւ կանանց անհատական առաջնությունները: Օլիմպիական մրցակարգով անցկացվող առաջնությանը մասնակցում են 32 տղամարդ եւ 24 կին թենիսիստներ:

Ե՛վ անհատական, ե՛ւ զուգախաղերի հաղթողների անունները հայտնի կդառնան առաջնության վերջին օրը՝ հոկտեմբերի 8-ին:

ԴԱՀՈՒԿԱՎԱՃՔ

Մրցաշրջանին ընդառաջ

Չմեռային նոր մրցաշրջանից առաջ մարզիկների պատրաստականությունը ստուգելու, ապագա մեկնարկներին նրանց լավագույն ձեւով նախապատրաստելու նպատակով ծաղկաձորում անցկացվեց անվավոր դահուկավազքի հանրապետական առաջնություն, որին մասնակցեցին վեց թիմերի՝ Երեւանի, Գյումրիի, Վանաձորի, Հրազդանի, Ախուրյանի, ԲԻՄՍ-ի մարզիկ-մարզուհիներ:

Տղամարդիկ եւ պատանիները մրցեցին 5 կմ դահուկավազքում եւ նույն տարածության կրոսավազքում, կանայք եւ աղջիկները՝ 5 կմ դահուկավազքում եւ 3 կմ կրոսավազքում: Երկու մրցաձեւերից տղամարդկանցից հաղթող դարձավ Հակոբ Մանուկյանը (Հրազդան), պատանիներից ուժեղագույն ճանաչվեց ԲԻՄՍ-ի ներկայացուցիչ Արմեն Եղիազարյանը: Դահուկավազքում կանանցից հաղթեց Կարինե Չակրյանը, աղջիկներից՝ Սաթենիկ Թահրյանը: Այս երկու մարզուհիներն էլ ներկայացնում են Հրազդանը: Կրոսավազքում առաջին տեղը կանանցից գրավեց Մարգարիտա Նիկոլյանը (Գյումրի), աղջիկներից՝ Մարիա Դանիելյանը (ԲԻՄՍ):

Թիմային հաշվարկում մրցանակակիրները տեղեր գրավեցին հետեւյալ հաջորդականությամբ՝ 1. Գյումրի՝ 390 միավոր, 2. Հրազդան՝ 347, 3. ԲԻՄՍ՝ 210:

ԲՄԲՇԱՄԱՐՏ

Մարզչի հուշամրցաշարն ավարտվեց

Օլիմպիական հերթափոխի հանրապետական հուշամրցաշարում անցկացվեց հանրապետության վաստակավոր մարզիչ Ռազմիկ Կարապետյանի հուշամրցաշարը: Ազատ ոճի ըմբշամարտի ճանաչված մասնագետը, մանկավարժը տարիների ընթացքում պատրաստել է մեծ թվով մարզիկների, որոնք լուրջ հաջողություններ են հասել տարբեր մակարդակի մրցումներում: Ռ. Կարապետյանի սաներից նշենք միայն Ալեքսայի օլիմպիադայի արծաթե մեդալակիր Արմեն Մկրտչյանին, աշխարհի գավաթակիր Գնել Մեժլումյանին, ԽՍՀՄ-ի չեմպիոն Կարո Սիմոնյանին:

Հուշամրցաշարին մասնակցեցին հանրապետության յոթ մարզերի 1962-63 թվականներին ծնված 155 ազատ ոճի ըմբիշներ: Ըստ քաշային կարգի հաղթողներ դարձան հետեւյալ պատանի մարզիկները. Սուրիկ Մարկոսյանը (Գառնի, 34 կգ), Արթուր Սարյանը (Գյումրի, 42 կգ), Արթուր Համբարձումյանը (Երեւան, 45 կգ), Արսակ Մկրտչյանը (Գյումրի, 48 կգ), Էդգար Հակոբյանը (Մարտունի, 52 կգ), Վարդան Գեղամյանը (Գառնի, 57 կգ), Դավիթ Պոտոյանը (Գյումրի, 63 կգ), Հովհաննես Մկրտչյանը (Գյումրի, 69 կգ), Արա Կարապետյանը (Գյումրի, 76 կգ), Սմբատ Բագրատունին (ըմբշամարտի հանրապետական դպրոց, 83 կգ), Արմեն Բեգինյանը (ՕՀՀՈ, 95 կգ):

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ

Նվիրված է ազատամարտիկի հիշատակին

Երեկ մայրաքաղաքի «Դինամո» ընկերության դահլիճում մեկնարկեց բոնցքամարտի մրցաշար, որը նվիրված է Արցախի համար պայքարում զոհված ազատամարտիկ, առաջին աստիճանի մարտական խաչի շքանշանակիր Արշակ Ղամբարյանի հիշատակին: Արդեն չորրորդ անգամ անցկացվող հուշամրցաշարին մասնակցում են 1982-83 թթ. ծնված պատանի բոնցքամարտիկներ:

Հուշամրցաշարը կազմակերպել են «Հայաստան» մարզական միությունը, որի սանն է եղել Արշակը, հանրապետության երկրպագի կամավորների միությունը, բոնցքամարտի հանրապետական ֆեդերացիան:

Հուշամրցամարտը կավարտվի կիրակի օրը՝ հոկտեմբերի 12-ին:

Ռ. Ա.

Եթե Էմե Ժակեն չհրավիրի Ալեն Պողոսյանին, ապա վերջինս կխաղա Հայաստանի դրոշի ներքո

ԵՐԵՎԱՆ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Իտալական «Սամպդորիա» ֆուտբոլային ակումբի հարձակվող, անվանի ֆրանսահայ ֆուտբոլիստ Ալեն Պողոսյանը հայտարարել է, որ Ֆրանսիայի հավաքականում հանդես գալու իր վերջին հույսը աշխարհի առաջնության նախնական փուլի հոկտեմբերի 11-ին կայանալիք վերջին հանդիպումն է: Միեւնույն ժամանակ նա նշել է, որ եթե այդ խաղին Ֆրանսիայի հավաքականի մարզիչ Էմե Ժակեն իրեն չհրավիրի հավաքական, ապա ինքն անմիջապես կընդունի Հայաստանի հավաքականի վաղեմի հրավերը՝ խաղալ իր հայրենակիցների հետ: Հիշեցնենք, որ հայկական կողմը վաղուց էր սկսել բանակցությունները Պողոսյանի հետ, սակայն վերջինս երկար ժամանակ հույս ուներ ընդգրկվել Ֆրանսիայի ազգային հավաքականում: Բանն այն է, որ եթե ֆուտբոլիստը որեւէ երկրի հավաքականի կազմում անցկացնում է գոնե մեկ միջազգային հանդիպում, ապա, Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՖԱ) կանոնների համաձայն, զրկվում է հետագա ամբողջ կյանքում այլ երկրի հավաքականում խաղալու հնարավորությունից: Ահա թե ինչու Պողոսյանը բավականին ժամանակ խուսափում էր ընդունել Հայաստանի հավաքականի հրավերը:

ԼՂՀ ԱԳՆ

Ադրբեջանական հարությանը ներշնչվում է պատերազմի անխուսափելիության գաղափարը

Սկիզբը էջ 1

- գիտական շրջաններում անհայտ ամերիկացի հեղինակների «Թուրքեր եւ հայեր: Հայկական հարցի ձեռնարկ» գիրքը, որ 1997 թվականի ապրիլին հրատարակվել է «Ազերբայջան» պետական հրատարակչությունում Ադրբեջանի նախագահի խորհրդական Հիդայաթ Օրուջեւի խմբագրությամբ: Գրքում վերաբերմունքի է ենթարկվում հայ ժողովրդի պատմությունը, իսկ Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության օրինակով հաստատվում է, որ իրենց հանցագործությունները կոծկելու եւ միջազգային հանրությանը ապակողմնորոշելու նպատակով «հայերը, եթե հարկ է, կոտորում են եւ իրենց ցեղակիցներին»:

- Լեռնային Ղարաբաղի խնդրի հետ կապված անվանարկման վառ օրինակ կարելի է համարել «Ադրբեջանի հանրապետության Շամխորի շրջանում ապրող հայ կանանց դիմումը ԱՄՆ նախագահ Քլինթոնին», որ հրապարակվել է «Բակինսկի ռաբոչի» թերթում 1997 թվականի օգոստոսի 7-ին, ուր պատշոնական Բաքուն այդ դժբախտ կանանց շուրթերով տեղեկացնում է, որ նրանք «վկա են եղել, թե ինչպես են հայերը ոչնչացրել եւ սպանել մայրերին, քույրերին, եղբայրներին եւ հարազատներին (ԼՂՀ արտաքին քաղաքական գերատեսչությունը միջազգային մարդասիրական կազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում այս փաստաթղթի վրա, կոչ անելով նրանց ծանոթանալ նմանօրինակ բոլոր նպատակների «հեղինակների» կյանքի պայմաններին, որոնք, ըստ ամենայնի, ենթարկվում են մշտական ծաղրուծանակի եւ սպառնալիքների):

- «ԱզերԹաջ» պետական լրատվական գործակալության հաղորդագրությունը («Բակինսկի ռաբոչի», 1997 թ. հուլիսի 14) Հ. Ալիեւի ԱՄՆ կատարած այցի մասին, «շնորհիվ որի» ամբողջ աշխարհի առջեւ «մերկացվեց հայերի իսկական դեմքը, այդ անպատիվ ազգը կորցրել է եւ այն աննշան «հարգանքն» իր նկատմամբ, որ նա ձեռք է բերել փողի, պատշոնների, մաֆիական խմբերի օգնությամբ»: Որպես Հ. Ալիեւի այցի հիմնական արդյունքներից մեկն է մատուցվում այն, որ «Ադրբեջանը, իր նախագահի խաղաղասիրական քաղաքականությունը ամբողջովին բացահայտել են հայերի կեղտոտ էությունը»:

Հուշագրի վերջում ԼՂՀ ԱԳՆ-ն փաստում է, որ Ադրբեջանի իշխանությունները

- վարում են ադրբեջանական հասարակության մեջ հակահայկական ստերեոտիպների ձեւավորման եւ շովինիստական տրամադրությունների արմատավորման քաղաքականություն,

- չնայած 1994 թվականի մայիսից գործող հրադադարին եւ փոխընդունելի փոխզիջումների հիման վրա խաղաղ կարգավորման իրենց ձգտման մասին բազմաթիվ հավաստիացումներին, շարունակում են առճակատման եւ ուժային ճնշման իրենց ավանդական քաղաքականությունը, այս անգամ գաղափարախոսական եւ հոգեբանական պատերազմի մեթոդներով ու միջոցներով,

- կամ չեն ձգտում, կամ ընդունակ չեն հանրությանը նախապատրաստել իրատեսական փոխզիջումների, որ անհրաժեշտ են Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ հակամարտության երկարատեւ եւ հաստատուն կարգավորման հասնելու համար:

Հուշագիրը կազմողների կարծիքով, «վերոնշյալն ամբողջությամբ միանշանակ վկայում է պատերազմի վերսկսման անխուսափելիությանը ադրբեջանական հանրությանը հետեւողականորեն նախապատրաստելու մասին»:

Վաֆա Գուլուզադեի հումորը

7 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԻՆՏԵՐՖԱՔՍ. Արդյոք հայկական կողմը հորդորում է ադրբեջանցիներին անմիջականորեն բանակցել ղարաբաղցիների հետ, պատշոնական Բաքուն հայտարարում է, որ պատրաստ է նման երկխոսության: Բայց ահա թե ինչ է ասել «Թուրան» գործակալությանն Ադրբեջանի նախագահի արտաքին քաղաքականության հարցերով պետական խորհրդական Վաֆա Գուլուզադեն: «Մենք միշտ էլ հայտարարել ենք, թե պատրաստ ենք բանակցել Լեռնային Ղարաբաղի հայերի հետ: Սակայն նման բանակցությունները կարող են տեղի ունենալ միայն որոշակի պայմաններով: Մենք նրանց հետ կարող ենք խոսել միայն Ադրբեջանի կազմում Ղարաբաղի ինքնավարության ասիճանի մասին: Մենք մտադիր չենք քննարկել նրանց հետ անկախության հարցը: Այսպիսով, Բաքուն կարող է Ղարաբաղի ներկայացուցիչների հետ խոսել որպես մեր հանրապետության ընդհանուր քաղաքացիների հետ», եզրակացրել է ադրբեջանցի պատշոնյան:

Էջեւիթն արծարծել է Ղարաբաղի խնդիրը

ԼՈՆԴՈՆ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Թուրքիայի փոխվարչապետ Բյուլենթ Էջեւիթը Լոնդոնում հրատարակվող արաբալեզու «Ալ-Հայատ» թերթի տրամադրությամբ հարցազրույցի ժամանակ վերահաստատել է իր երկրի դիրքորոշումը Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ եւ ասել, որ Թուրքիան ցանկանում է «զարգացնել իր հարաբերությունները Հայաստանի հետ», սակայն Հայաստանը կարիք ունի «զարգացնելու իր հարաբերությունները Թուրքիայի հետ»:

Սակայն էջեւիթը պնդել է, որ Հայաստանը, ի հավելումն Լեռնային Ղարաբաղի, դեռեւս իր վերահսկողության տակ է պահում ադրբեջանական տարածքի մի մեծ հատված եւ պետք է «վերջ դնի բռնազավթմանը ու հասնի Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման»:

Էջեւիթը շարունակել է, ասելով, որ ինքն առաջարկել է խնդրի լուծում, եւ որ աշխարհն սկսել է հետաքրքրություն ցուցաբերել այդ առաջարկի նկատմամբ: Նա ասել է, որ Ղարաբաղի որոշ շրջաններում հայերը մեծամասնություն են կազմում, սակայն Նախիջեւանի եւ Ադրբեջանի միջեւ մտցվել են հայկական տարածքներ, որոնք, ըստ նրա, նախկինում պատկանել են Ադրբեջանին:

Սակայն, երբ ստալինյան ժամանակաշրջանում այդ շրջանները բռնի միացվեցին Հայաստանին, Ադրբեջանն ստիպված էր անջատվել անկախ Նախիջեւանից, որը պատկանում էր իրեն: Այս իրավիճակը դժվարացնում է կապերի ստեղծումը Թուրքիայի, Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի միջեւ: Այդ իսկ պատճառով Լեռնային Ղարաբաղի այն մարզերը, որոնցում հայերը մեծամասնություն են կազմում, պետք է միացվեն Հայաստանին, դրա փոխարեն Ադրբեջանին միացնելով Ադրբեջանի եւ Նախիջեւանի միջեւ ընկած տարածքը:

Քլերիդեսը հայտարարեց, որ հրթիռները կտեղակայի երկիրը պաշտպանելու համար

7 ՀՈԿՏԵՄԲԵՐ, VOA. Կիպրոսի նախագահ Գլավկոս Քլերիդեսը հայտարարեց, որ եթե Կիպրոսի խնդիրը չլուծվի, իր կառավարությունը հաջորդ տարի երկրի տարածքում կտեղակայի «երկիր-օդ» տիպի ռուսական արտադրության հրթիռները: «Կղզու հունական համայնքը չի հրաժարվի իր երկիրը պաշտպանելու իր իրավունքից», ընդգծեց Քլերիդեսը երեքշաբթի օրը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում: Թուրքիան դեմ է հանդես գալիս այդպիսի հրթիռների տեղակայմանը եւ հայտարարել է, թե կնախաձեռնի ցանկացած անհրաժեշտ գործողություններ, որպեսզի խոչընդոտի դրանց տեղակայմանը:

ADANA COMMERCIAL BANK

♦Ընդամենը *1%-ով* 1 օրվա ընթացքում անհատ եւ իրավաբանական անձանց համար կատարում ենք փոխանցումներ *Մոսկվայից, Սանկտ-Պետերբուրգից, ԱՄՆ-ից, Կանադայից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Ավստրիայից, Լեհաստանից* եւ աշխարհի այլ երկրներից

♦Սպասարկում ենք *VISA, MasterCard/EuroCard, Diners Club, JCB.*

♦Ամենաշահավետ պայմաններով տարածում ենք *MasterCard/EuroCard.*

♦Ընդունում ենք ավանդներ հետեւյալ տոկոսադրույքով.

Տար / Փաթ	1 ամիս	2 ամիս	3 ամիս	6 ամիս	9 ամիս	12 ամիս
USD DEM FRF	2.0%	4.0%	7.5%	15.0%	22.5%	36.0%
AMD RUR	2.0%	5.0%	8.0%	18.0%	28.5%	40.0%

Նվազագույն գումարը չի սահմանափակվում:

♦Կատարում ենք բանկային ցանկացած գործառնություն:

Երեւան, Նալբանդյան 5, հեռ. 58-38-64, 58-59-80

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ (ԲՀԻ)

Բաց հասարակության ինստիտուտի Ազգային կրթական ծրագիրը հայկական կազմակերպություններից ընդունում է նախագիծ-առաջարկներ, որոնց նպատակն է ուսուցման առաջադեմ մեթոդների միջոցով նպաստել բաց քաղաքացիական հասարակության զարգացմանը: Այդ մեթոդները պետք է նպաստակ հետապնդեն զարգացնելու հետեւյալ հմտությունները, որոնք կոլեկտիվներին հնարավորություն կտան գործել ավելի արդյունավետ (օրինակ, կզարգացնեն միմյանց լսելու, օգնելու, խնդիրը պարզաբանելու, ընբռնածը ստուգելու, բանավիճելու ունակությունները):

- մարդկանց հետ փոխհարաբերությունների մեջ մտնելու հմտություններ,
- անձնական պատասխանատվություն,
- ընդհանուր նպատակների սահմանում,
- խմբային աշխատանք,
- համատեղ որոշումների ընդունում,
- հրապարակային ելույթ:

Խրախուսվում են նաեւ այլ նախագիծ-առաջարկներ, որոնք նպաստակուղղված են կրթության ասպարեզում ժողովրդավարական բարեփոխումների խթանմանը եւ երեխաների անհատականության զարգացմանը նպաստող մեթոդների մշակմանը:

Նախագիծ-առաջարկների բյուջեն չպետք է գերազանցի 25000 ԱՄՆ դոլարը. Նախագիծ-առաջարկները պետք է գրված լինեն անգլերեն եւ ներկայացվեն ԲՀԻ գրասենյակ:

Դիմումներն ընդունվում են մինչեւ ս. թ. նոյեմբերի 12-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Բաց հասարակության ինստիտուտ. Երեւան, Այգեձորի 53 բ: Հեռ. 27 21 19, AT&T 151 088

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

մեկ սենյականոց բնակարան 9 հարկանի շենքի 8-րդ հարկում, Խորենացու փողոցում:

Զանգահարել 23-37-96

Արաբկիրի շրջանի դատարանում քննվող քաղ. գործին ըստ հայցի Մարինե Հարությունյանի ընդդեմ Վարուժան Վոլոդիայի Խաչատրյանի (հասցեն. Երեւան, Գվարդիականների 4 շենք, բն. 17) ընթացք տալու համար խնդրվում է բոլոր քաղաքացիներին եւ կազմակերպություններին Վարուժան Վոլոդիայի Խաչատրյանի գտնվելու վայրի մասին տեղեկություններ ունենալու մասին հայտնել Արաբկիրի շրջանի դատարան 24-01-61 հեռախոսահամարով:

Դատավոր Ա. Եղիազարյան

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

մեկ սենյականոց բնակարան Կոմիտաս փողոցում, 5 հարկանի շենքի 5-րդ հարկում (Արաբկիր հանրախանութի շենքում):

Զանգահարել 23-34-35

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:

Զանգահարել՝ 27 22 57 ժամը՝ 10-16, 58 33 26 ժամը՝ 18-23

ԿՈՐԵԼ Է

Գայանե Ժորայի Թամրզովայի MT-I N 237001 քիմիական տեխնիկումի դիպլոմը: Համարել անվավեր:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

4 սենյականոց բնակարան II5/70 քմ. Չարենցի 52, 3 հարկանի քարե շենքի 2-րդ հարկում:

Հեռ.՝ 55-66-56

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանությունը հայտարարում է մրցութային ընդունելություն Անվտանգության ծառայության աշխատողի թափուր պաշտոնի համար. պահանջվում են անգլերենի իմացություն, համապատասխան աշխատանքի փորձ:

Դիմել Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանություն հետեւյալ հասցեով. Երեւան, Բաղրամյան փող. 18, կադրերի բաժին, մինչեւ հոկտեմբերի 10-ը, հեռ. 52-46-61, 52-16-11:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

սեփական երկհարկանի շենքի 2-րդ հարկը՝ բաղկացած երեք սենյակից: Երկու կողմից սեփական հողատարածք 300 քառ մետր ընդհանուր մակերեսով: Երկու ավտոտնակ, մուտքը առանձին: Հասցեն Զրաբաս 68 (ԳԱ հետեւի մասում):

Հեռախոս 52-54-39:

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www/arminco.com/spyur)

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 679 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 7.10.1997 Գինը՝ 100 դրամ